ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2004

Ձարգացումը
Վերահսկողությունը
Կարգավորումը

2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

Բանկային համակարգի վերահսկողությունը և կարգավորումը 6

Բանկային համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները 14

Բանկային վերահսկողությունը 23

Կադրերի վերապատրաստումը և համագործակցությունը այլ երկրների վերահսկողների հետ 25

ՀՀ բանկային համակարգը 2004 թվականին 27

Ընդհանուր դրույթներ 27

Բանկային համակարգի կապիտալը 28

Բանկային համակարգի պարտավորությունները 30

Բանկային համակարգի ակտիվները 34

Բանկային համակարգի ֆինանսական արդյունքները 40

Վճարահաշվարկային համակարգ 43

Բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը 44

ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները 48

Բանկային վերահսկողության զարգացման հեռանկարները 49

Հավելվածներ 55

ՆԱԽԱԲԱՆ

2004 թվականին բանկային համակարգի զարգացումները վկայում են, որ մակրոտնտեսական բարենպաստ միջավայրի պարագայում մեծ է համակարգի ընդարձակման ու խոշորացման ներուժը: Բանկային համակարգը 2004 թվականին գործել է առողջ մրցակցային միջավայրում՝ վստահության ամրապնդման և ծառայությունների ընդլայնման միջոցով գրավելով հաճախորդների ավելի լայն շրջանակներ:

2004 թվականի նշանակալի հաջողություններից է ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացումը, որին նպաստեցին նաև նախորդող մի քանի տարիներին այդ ուղղությամբ իրականացված միջոցառումները: Այդ ձեռնարկումների շնորհիվ մի կողմից ապահովվել է ֆինանսական միջոցների ներհոսք բանկային համակարգ, մյուս կողմից՝ վարկավորման մի շարք կայացած մեխանիզմների և տնտեսական ակտիվության շնորհիվ էականորեն աճել են վարկերի ծավալները: Բանկային համակարգի կողմից ներգրավված ընդհանուր ավանդները 2004 թվականին աճել են 24%-ով, իսկ տնտեսության վարկավորումը՝ 37%-ով (2003 թվականին, համապատասխանաբար՝ 13% և 16%): Անվանական ՀՆԱ-ի 16.7% աճի համեմատ բանկային համակարգի ակտիվների 29% առաջանցիկ աճի տեմպի պարագայում 1.8 տոկոսային կետով աճել է բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը և կազմել 19.2% (2003 թ.՝ 17.4%): Այդուհանդերձ, ֆինանսական միջնորդության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում դեռևս խիստ ցածր է, քանի որ մի շարք եվրոպական երկրներում և նախկին խորհրդային տարածքի որոշ հանրապետություններում բանկային համակարգի ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է 60 - 100%:

Ֆինանսական միջնորդության խթանման արմատական քայլերից մեկը դեռևս 1999-2000 թվականներին Կենտրոնական բանկի ձեռնարկած՝ բանկային համակարգի «առողջացման» գործընթացն էր, որը միտված էր շուկայից դուրս բերելու խնդրահարույց բանկերը: Այդ բանկերը տնտեսության զարգացման և ֆինանսական շուկայում առողջ մրցակցային դաշտի ուժեղացման պայմաններում դարձել էին անվճարունակ և ֆինանսական շուկայում դրանց հետագա գործունեությունը կարող էր անուղղելի վնաս հասցնել բանկային համակարգի հետագա զարգացմանը: Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ իրականացվեցին մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ ընդունվեց բանկերի սնանկության մասին նոր օրենք և բարձրացվեց Կենտրոնական բանկի վերահսկիչ դերը: Այդ ռազմավարական ծրագրի իրականացումը ոչ միայն թույլ տվեց ժամանակին կանխելու հնարավոր ճգնաժամը, այլ նաև նպաստեց բանկային համակարգի հետագա զարգացմանն ու առողջ մրցակցային միջավայրի հաստատմանը:

Ֆինանսական միջնորդության աստիճանի բարձրացման գործում էական դեր են ունեցել ՀՀ-ում գործող՝ փոքր և միջին բիզնեսի զարգացմանն ուղղված միջազգային վարկային ծրագրերը: Արդեն մի քանի տարի է ՀՀ առևտրային բանկերը ընդգրկված են այդպիսի մի շարք ծրագրերում: Նախապես մրցութային կարգով ընտրված առևտրային բանկերին ծրագրերի շրջանակներում ոչ միայն տրամադրվել են ֆինանսական միջոցներ, այլև ներդրվել են վարկավորման որոշակի մեխանիզմներ, հատուկ դասընթացներում վերապատրաստվել են բանկերի վարկային գործակալները:

Ֆինանսական միջնորդության համար որոշիչ դեր ունեն ֆինանսական ենթակառուցվածքները և դրանց արդյունավետ գործունեությունը: 2003 թվականի ընթացքում ներդրվել են վարկային ռեգիստրը, ավանդների երաշխավորման համակարգը՝ էապես նպաստելով ռիսկերի նվազեցմանը և ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը: Միևնույն ժամանակ, իրենց գործունեությունն են սկսել վարկային կազմակերպությունները՝ հնարավորություն ընձեռելով բնակչության առավել լայն զանգվածներին օգտվելու որոշակի ֆինանսական ծառայություններից: 2003 – 2004 թթ. աննախադեպ ավելացել է կիրառվող պլաստիկ քարտերի քանակը՝ ապահովելով ոչ միայն լրացուցիչ էժան ֆինանսական միջոցների ներհոսք առևտրային բանկերի համար, այլև քարտերի միջոցով հարակից նոր ծառայությունների մատուցման հնարավորություններ (օվերդրաֆտ, սպառողական վարկեր):

2004 թվականին զգալիորեն (38.5%-ով կամ 36.8 մլրդ դրամով) աճել են համախառն վարկային ներդրումները (ներառյալ դեբիտորական պարտքերը): Վարկերի ծավալային աճին զուգահեռ, 36.9%-ով ավելացել է նաև վարկերի ու դեբիտորական պարտքերի քանակը և 2004թ. վերջի դրությամբ կազմել մոտ 200 հազար հատ: Վարկավորման նման աճի պարագայում վարկային ներդրումների որակի վատացում չի արձանագրվել: Հատկանշական է, որ պահպանվել են տնտեսության ճյուղերի վարկավորման՝ նախորդ տարվա սեզոնայնությունները:

2004 թվականին աննախադեպ բարձր է եղել շահույթի մակարդակը, ինչը հիմնականում պայմանավորվել է վարկերի ծավալի աճով և որակի պահպանմամբ: Դիտարկվում է նաև բանկերի միջև մրցակցության ուժեղացում: Առևտրային բանկերը փորձում են իրենց դիրքերն ամրապնդել ֆինանսական շուկայի որոշակի հատվածներում, որոշակի ֆինանսական գործիքների ու ծառայությունների մատուցման ոլորտներում:

Հատկանշական է, որ 2004 թվականին բանկային համակարգի վարկավորման աճը, ինչպես և նախորդ տարի, հիմնականում տեղի է ունեցել սպառողական և առևտրային վարկերի հաշվին: Սպառողական վարկերի 16.1 մլրդ դրամով (կամ 69.4%-ով) աճը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է սպառողական վարկավորման նոր մեխանիզմների ներդրմամբ և բնակչության զուտ տնօրինվող եկամտի աճով: 2003 թվականի համեմատ, մասնավոր տրանսֆերտները 2004 թվականին աճել են 63 %-ով, ինչն ազդել է նաև մասնավոր հատվածի զուտ տնօրինվող եկամտի

աճի, ինչպես նաև ծախսերի 10.6%-ով աճի վրա: Առևտրային վարկերն ավելացել են 10.0 մլրդ դրամով կամ 47.3%-ով:

2004 թվականին անվանական ՀՆԱ 16.7% աճին հիմնականում նպաստել են գյուղատնտեսության և շինարարության ճյուղերը: Գյուղատնտեսության ճյուղի վարկավորումը տարվա ընթացքում ավելացել է 11.7%-ով, իսկ ճյուղի թողարկման անվանական աճը կազմել է 22.9%: Շինարարության ոլորտում թողարկման անվանական աճը կազմել է 18.7%, որին զուգահեռ, բանկային համակարգի կողմից ճյուղի վարկավորումն ավելացել է 10.0%-ով կամ 481 մլն դրամով: Շինարարության աճն ապահովվել է ոչ թե բանկային համակարգի վարկավորման, այլ մասնավոր հատվածի կողմից ֆինանսավորված շինարարության ծավալների աճի հաշվին:

Արդյունաբերության ճյուղի վարկերը 2004 թվականին ավելացել են 19.6 %-ով (5.8 մլրդ դրամով), իսկ ճյուղի թողարկման անվանական աճը կազմել է 25.1%: Նախորդ տարիների համեմատ թողարկման անվանական բարձր աճ է արձանագրվել հանքագործության ճյուղում՝ 202.1% (աճի վրա շատ էական է եղել պատվիրատուի հումքի գների աճը), որի վարկավորումը բանկային համակարգի կողմից ավելացել է 2.7 մլրդ դրամով և կազմել 3.1 մլրդ դրամ:

Որպես ֆինանսական միջնորդության մակարդակի բնութագրիչ՝ տոկոսադրույքների սպրեդի համեմատաբար բարձր մակարդակը վկայում է ՀՀ ֆինանսական համակարգում անբավարար ֆինանսական միջնորդության աստիճանի մասին: Այսպես, չնայած 2004 թվականին տոկոսադրույքների սպրեդը նվազել է մոտ 1 տոկոսային կետով, այնուամենայնիվ, Մերձբալթյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների 5 տոկոսային կետ կազմող սպրեդի նկատմամբ ՀՀ բանկերի տոկոսադրույքների սպրեդը կրկնակի բարձր է:

Սպրեդի բարձր մակարդակը բացատրվում է նրանով, որ ՀՀ բանկային համակարգի և առանձին բանկերի փոքր չափերի պարագայում փոքր է ավանդային և վարկային բազան, ուստի բարձր հաստատուն ծախսերի պարագայում ցածր է բանկի գործունեության արդյունավետությունը՝ ինչը ենթադրում է, որ բանկային համակարգում դեռևս բացակայում է «մասշտաբային էֆեկտը»: Խոշոր բանկերը, այլ հավասար պայմաններում, հնարավորություն ունեն ներդնելու ռիսկերի կառավարման առավել համապարփակ և գործող համակարգ, նվազեցնելու այդ ռիսկերից հավանական վնասները և բարձրացնելու շահութաբերությունը: Սպրեդի բարձր մակարդակը պայմանավորում են նաև մի կողմից՝ մեծ վարկային ռիսկը, մյուս կողմից՝ տնտեսությունում «երկար» խնայողությունների բացակայությունը, ինչի հետևանքով ֆինանսական միջոցների ներգրավման - տեղաբաշխման անհամապատասխանությունից առաջանում է այլ ռիսկերից (իրացվելիության, տոկոսադրույքների) ակնկալվող կորուստների լրացուցիչ փոխհատուցման խնդիր:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Բանկային վերահսկողություն իրականացնող և վերահսկողական գործընթացին աջակցող ստորաբաժանումների գործառույթները

Կենտրոնական բանկն իր լիազորությունների սահմաններում ապահովում է բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության անհրաժեշտ պայմաններ, պաշտպանում է վարկատուների և ավանդատուների շահերը: Այս խնդիրների իրականացման շրջանակներում, բանկային վերահսկողության համար Կենտրոնական բանկի պատասխանատու և վերահսկողական գործընթացին աջակցող ստորաբաժանումներ են հանդիսանում Բանկային վերահսկողության, Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների, Վիճակագրության, Բանկերի վերակառուցման գործընթացների կառավարման և Իրավաբանական վարչությունները:

Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների և Իրավաբանական վարչություններն աջակցում են բանկային վերահսկողության գործընթացին՝ մեթոդաբանական, վերլուծական և իրավական առումներով: Վիճակագրության վարչությունը ԿԲ կողմից լիցենզավորված անճանցից տեղեկատվություն է հավաքագրում և ամփոփում: Բանկերի վերակառուցման գործընթացների կառավարման վարչությունը իրականացնում է բանկերի լուծարման ընթացակարգերի կառավարումը:


Բանկային վերահսկողության վարչությունն իրականացնում է բուն վերահսկողական գործընթացները.

- ✓ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների (վարկային կազմակերպություններ, արտարժույթի փոխանակման կետեր, արտարժութային դիլերներ, արտարժութային բորսաներ) լիցենզավորումը,
- ✓ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեության հեռակա վերահսկողությունը,
- ✓ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեության տեղերում վերահսկողությունը,
- ✓ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեության դադարեցումը:


Բանկային վերահսկողության, Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների և Իրավաբանական վարչությունների ղեկավարները ԿԲ լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի անդամներ են, որը բանկային վերահսկողության ղեկավար մարմինն է:

Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովում ընդգրկված վարչությունները և դրանց կառուցվածքը


Բանկային վերահսկողության վարչություն



Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչություն



Իրավաբանական վարչություն



Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը

Բանկային վերահսկողության ղեկավար մարմինը ՀՀ կենտրոնական բանկի Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովն է, որը նախագահում է Կենտրոնական բանկի նախագահը: Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի գործառույթներն են.

- ✓ բանկերի ստեղծմանը նախնական հավանություն տալու, բանկերին, բանկերի մասնաճյուղերին և ներկայացուցչություններին գրանցելու և լիցենզավորելու հարցերը,
- ✓ բանկերի, վարկային կազմակերպությունների, դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների, արժութային դիլերների, փոխանակման կետերի ղեկավարների և աշխատակիցների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ կազմակերպությունների ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության, գրանցման հարցերը,
- ✓ բանկի կողմից թույլ տրված խախտումների, խախտում թույլ տված բանկերի բացատրությունների և առարկությունների, խախտում թույլ տված բանկի նկատմամբ պատժամիջոց կիրառելու կամ չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշումներ ընդունելը,
- ✓ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող այլ կազմակերպությունների լիցենզավորման և գրանցման հարցերը.
- ✓ Կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստացած այլ կազմակերպությունների կողմից թույլ տրված խախտումների, առկայության դեպքում՝ վերահսկվող կազմակերպության բացատրությունների և առարկությունների, նրանց նկատմամբ պատժամիջոց կիրառելու կամ չկիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշումներ ընդունելը,
- ✓ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված «Կանոնակարգ 1-ով» նախատեսված փոփոխությունների գրանցման խնդիրները,
- ✓ Կենտրոնական բանկի այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններից բխող հարցեր:

Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորումը

Կենտրոնական բանկի կողմից բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» կանոնակարգ 1-ի, «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման համար գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության

պահանջները, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, ղեկավարների որակավորումը, կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռք բերումը» կանոնակարգ 13-ի, «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի, «Արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 12-ի, «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ի, «Վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, վճարահաշվարկային փաստաթղթերի քլիրինգային հաշվարկներ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 17-ի, «Քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, քարտային վճարումների պրոցեսինգ իրականացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 18-ի, «Վճարային քարտեր և այլ փաստաթղթեր թողարկող և իրացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի գրանցումը, վճարային քարտեր և այլ փաստաթղթեր թողարկող և իրացնող կազմակերպությունների ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 19-ի և «ՀՀ տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ի հիման վրա: Այս աշխատանքների պատասխանատու ստորաբաժանումը Բանկային վերահսկողության վարչության Լիցենզավորման և բանկային ռեգիստրի բաժինն է:

Կենտրոնական բանկի խորհուրդը հավանություն է տալիս այնպիսի բանկերի հիմնադիրների միջնորդագրին, որոնց.

- ✓ հիմնադիրները չունեն վատ համբավ և քրեորեն հետապնդելի չեն,
- ✓ կապիտալում կատարված ներդրումներն ունեն օրինական ծագում,
- ✓ տնտեսական ծրագիրը իրատեսական է և բավարարում է Կենտրոնական բանկի կողմից հաստատված ձևին,
- ✓ ապագա բանկի ներքին կազմակերպական կառուցվածքը բավարար է ստորաբաժանումների միջև բնականոն հարաբերությունների ապահովման և ռիսկերի արդյունավետ կառավարման համար,
- ✓ գործադիր մարմնի և ղեկավարների մասնագիտական պատրաստվածության մակարդակը բավարարում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջները,
- ✓ ներկայացված հիմնադիր փաստաթղթերը արժանահավատ են և չեն պարունակում կեղծ տվյալներ:

Բանկի, բանկի մասնաճյուղի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի (ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ կազմակերպությունների) նշանակվող կամ ընտրվող ղեկավարների թեկնածուների, արժութային դիլերների որակավորման, մասնագիտական

համապատասխանության ստուգումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի կողմից: Որակավորման պահանջները յուրաքանչյուր տարի թարմացվում և արդիականացվում են:

Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների վերահսկողությունը

Բանկերի և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ կազմակերպությունների հեռակա վերահսկողությունը և վերստուգվող անձանց մոտ ստուգումներն իրականացվում են Բանկային վերահսկողության վարչության չորս բաժինների կողմից: Վարչության երեք բաժինները վերահսկում են բանկային հաստատությունները, իսկ մեկ բաժինը՝ վարկային կազմակերպությունները:

Բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ հեռակա վերահսկողությունն իրականացվում է «Հեռակա վերահսկողության իրականացման» ձեռնարկի կանոններին համապատասխան, որով սահմանվում են հեռակա վերահսկողության իրականացման սկզբունքներն ու մեթոդները, կանոնակարգվում հեռակա վերահսկողության գործընթացները, դրանց հաջորդականությունն ու ժամկետները, ինչպես նաև հեռակա վերահսկողության մեջ ներգրավված անձանց շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Հեռակա վերահսկողությունը բանկերից ստացված տեղեկատվության (հաշվետվությունների և այլ տեսքով) հիման վրա բանկի գործունեության շարունակական վերլուծությունն է՝ բանկի ֆինանսական վիճակի, ռիսկերի մակարդակի գնահատման ու բանկային գործունեությունը կանոնակարգող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանելիության ստուգման նպատակներով: Հեռակա վերահսկողության հիմնական խնդիրը բանկի ֆինանսական վիճակի շաբաթական, ամսական, եռամսյակային և տարեկան վերլուծությունների միջոցով ռիսկերի բացահայտումն ու գնահատումն է՝ բանկերի հնարավոր կորուստները կանխելու կամ նվազեցնելու նպատակով:

Հեռակա վերահսկողության իրականացման համար, օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև ըստ «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի, «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ի պահանջների, վերահսկվող մարմինները Կենտրոնական բանկի վիճակագրության վարչություն են ներկայացնում հաշվետվական ձևեր՝ սահմանված բովանդակությամբ և ներկայացման ժամկետներով, որոնք համապատասխան ստուգումներից հետո տրվում են Բանկային վերահսկողության և Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչություններին: Վերոնշյալ վարչությունները վերահսկողական և վերլուծական աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով օգտվում են նաև վարկային ռեգիստրից ստացված տեղեկատվությունից, նախորդ ժամանակաշրջաններում Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվություններից, նախորդ և ընթացիկ ժամանակաշրջաններում բանկից ստացված գրություններից, ծանուցումներից, հեռանկարային

զարգացման ծրագրերից, հրապարակված ֆինանսական հաշվետվություններից և դրանց կցված աուդիտորական եզրակացություններից, վերստուգվող անձանց մոտ (բանկերում) ստուգումների արդյունքներից և այլ միջոցներով ստացված տեղեկատվությունից:

Բանկերից և վարկային կազմակեպություններից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում յուրաքանչյուրի համար կազմվում են ներքին ամփոփ հաշվետվություններ, որոնցում բացահայտվում են բանկի/ վարկային կազմակերպության գործունեությունը բնութագրող ցուցանիշների էական փոփոխությունները, ներկայացվում են գործունեության հիմնական միտումներն ու դրանց փոփոխությունները, նշվում են ֆինանսական կազմակերպության առջև ծառացած հիմնախնդիրները, գործունեության ռիսկային բնագավառները: Հեռակա վերահսկողության ընթացքում բացահայտվում են ոչ միայն բանկի/վարկային կազմակերպության ֆինանսական ցուցանիշների շարժերը, մասնավորապես՝ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվային ակտերով ամրագրված սահմանաչափերից շեղումները, այլ նաև ուսումնասիրվում են դրանց պատճառները, գնահատվում են դրանց փոփոխությունները և մշակվում համապատասխան միջոցառումների պլան՝ բացահայտված ռիսկերը կառավարելու նպատակով: Հեռակա վերահսկողությունն ուղղված է նաև բանկի/վարկային կազմակերպության սպասվող ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատմանն ու վերլուծությանը:

Հեռակա վերահսկողության ընթացքում վերլուծության են ենթարկվում բանկերի արտարժութային, տոկոսադրույքի, իրացվելիության ռիսկերը, որի համար կիրառվում են VAR, դյուրացիայի, GAP մեթոդաբանությունները և սթրես - թեստերը:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականը (ՔԱՄԵԼՍ) հաշվարկվում է բանկի կապիտալի համարժեքության (Ք), ակտիվների որակի (Ա), կառավարման (Մ), եկամտաբերության (Ե), իրացվելիության (Լ) և շուկայական ռիսկի նկատմամբ զգայունության (Ս) գնահատումների հիման վրա: ՔԱՄԵԼՍ-ի նշված տարրերի գնահատումն իրականացվում է դրանք բնութագրող տարբեր ֆինանսական հարաբերակցությունների հաշվարկման միջոցով:

Բանկի կապիտալի համարժեքության գնահատման համար հաշվի են առնվում բանկի նորմատիվային կապիտալի մեծությունը, կապիտալի համարժեքության, խոշոր փոխառուների, մեկ փոխառուի, բանկի հետ կապված անձանց գծով սահմանված նորմատիվները: Ակտիվների որակի գնահատման ժամանակ դիտարկվում են վարկային ռիսկի մակարդակը, չաշխատող վարկերի և ակտիվների կշիռները, ակտիվների կենտրոնացվածությունը, ակտիվների հնարավոր կորուստների բավարարությունը: ՔԱՄԵԼՍ-ի հաջորդ տարրի՝ եկամտաբերության գնահատման ժամանակ դիտարկվում են ROA, ROE հարաբերակցությունները և հիմնական բանկային գործունեությունից ստացվող եկամուտների մակարդակը բնութագրող մի շարք այլ հարաբերակցություններ: Իրացվելիության գնահատման համար հաշվի են առնվում բանկի ընթացիկ և ընդհանուր իրացվելիության ցուցանիշների

մակարդակները, կարճաժամկետում (մինչև 180 օր) գնահատվող հոսքերի կառուցվածքի հետազոտությունները: ՔԱՄԵԼՍ-ի վերջին տարրի՝ շուկայական ռիսկի նկատմամբ զգայունության գնահատման

ընթացքում դիտարկվում են արտարժութային ռիսկի գծով բանկի դիրքերը, տոկոսադրույքի և անշարժ գույքի գների տատանման ռիսկերի մակարդակները:

Բանկի կառավարման (Մ) գնահատումն իրականացվում է տեղերում ստուգումների ժամանակ՝ առանձին հարցաթերթիկի պատասխանների արդյունքների հիման վրա: Լրացվող հարցաթերթիկն ընդգրկում է բանկում՝ կորպորատիվ կառավարման, բանկի կազմակերպական կառուցվածքի, ներքին հսկողության ծառայության, ռիսկերի կառավարման ներքին կանոնակարգերի, բանկի աշխատակիցների որակավորման գնահատման վերաբերյալ հարցադրումներ:

Բանկերի ցուցանիշների ՔԱՄԵԼՍ ամփոփ գնահատականը հաշվարկվում է որպես վերը նշված տարրերի գնահատականների միջին թվաբանական:

Բանկերից ստացված տեղեկատվության հիման վրա, ամսական կտրվածքով հաշվարկվում է բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականը՝ ՔԱՄԵԼՍ-ը: Ուսումնասիրելով ու վերլուծելով հաշվետվությունների հիման վրա հաշվարկված ՔԱՄԵԼՍ-ի գնահատականները, վերջինս ձևավորող ցուցանիշները, ցուցանիշների փոփոխության հիմնական պատճառներն ու միտումները՝ վերահսկողն իրականացնում է ՔԱՄԵԼՍ-ի գնահատականների ճշգրտումներ՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԵԼՍ) հաշվարկման, հաստատման և հրապարակման կարգի»: ՔԱՄԵԼՍ-ի գնահատականների կտրուկ շեղումների դեպքում վերահսկողի կողմից կատարվում է մանրակրկիտ վերլուծություն՝ շեղումների պատճառները բացահայտելու համար:

ՔԱՄԵԼՍ-ի գնահատականի՝ 3 միավորից պակաս արդյունքը ՀՀ կենտրոնական բանկի համար կարող է բանկի տարածքային ստորաբաժանումների բացման միջնորդագիրը մերժելու, առավել խիստ հիմնական տնտեսական նորմատիվներ կամ պատժամիջոցներ սահմանելու, ինչպես նաև որոշ գործարքների իրականացման սահմանափակման հիմք հանդիսանալ: Բանկի ամփոփ գնահատականի 2 միավոր և ցածր լինելու դեպքում բանկը համարվում է անվճարունակ:

Հեռակա վերահսկողության ընթացքում հայտնաբերված ռիսկերի առավել համապարփակ ուսումնասիրության, առաջացած ռիսկերի պատճառների բացահայտման նպատակով, ինչպես նաև Կենտրոնական բանկի նախագահի կարգադրությամբ հաստատված՝ բանկերի ստուգումների ժամանակացույցի հիման վրա, բանկերում և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ կազմակերպություններում իրականացվում են տեղերում վերստուգումներ: Կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում տեղերում վերստուգումներ է իրականացնում համաձայն «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկի»: Ըստ անհրաժեշտության՝ յուրօրինակ գործարքների բացահայտման, տեղեկատվական համակարգերի ստուգման դեպքերում, տեղերում ստուգումներին կարող են մասնակցել նաև ՀՀ ԿԲ այլ ստորաբաժանումների աշխատակիցներ (Իրավաբանական, Տեղեկատվական համակարգերի զարգացման վարչություններ և այլն):

Ստուգման ծրագիրը հաստատում է Կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովը: Յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո վերստուգող խմբի կողմից պատրաստվում է ստուգման հաշվետվություն՝ «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկում» ներկայացված կարգով:

Բանկի տարբեր ոլորտների վերահսկողությունը իրականացնելիս վերահսկողները գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգի, իրականացվող գործընթացների և այդ ոլորտների գործունեությունը կարգավորող ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և կարգերի կիրառելիությունը: Գնահատում են բանկի ներքին հսկողության համակարգը, ներքին աուդիտի գործունեության արդյունավետությունը և պարզում՝ արդյոք բանկի աշխատակիցները գործո՞ւմ են բանկի ղեկավարության կողմից սահմանված սկզբունքներին համապատասխան: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բանկի կառավարման համակարգի վերլուծությանը և դրա հետ կապված ռիսկերի բացահայտմանը, մասնավորապես՝ բանկի խորհրդի և գործադիր ղեկավարության միջև իրավունքների և պատասխանատվության սահմանազատմանը:

Բանկային գործունեության դադարեցման գործընթացներն իրականացվում են «ՀՀ կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» օրենքների, ինչպես նաև «Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձևավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգ 7-ի համաձայն: Նշված օրենսդրական ակտերով սահմանվում են բանկերի լուծարման և անվճարունակության հիմքերը, բանկի սնանկությունը, ժամանակավոր ադմինիստրացիայի գործողության կարգը և բանկային գործունեության դադարեցման հետ կապված այլ ընթացակարգեր: Բանկը անվճարունակ ճանաչելուն պես նրա կառավարումը անցնում է բանկային ադմինիստրատորներին, որոնց նշանակում է Կենտրոնական բանկի Բանկերի վերակառուցման գործընթացների կառավարման վարչությունը: Չնայած դրան, բանկի նկատմամբ վերահսկողությունը շարունակում է իրականացնել Բանկային վերահսկողության վարչությունը: Բանկի անվճարունակության հիմք են հանդիսանում հիմնական կապիտալի 50 տոկոսը և ավելին սպառելը, պարտատերերի օրինական պահանջները բավարարելու անկարողությունը, պարտադիր պահուստավորման պարբերական խախտումները, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված չափից բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականի ցածր լինելը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկային համակարգի կարգավորման դաշտի էական բարեփոխումներ կատարվեցին 2004 թվականին. ֆինանսական համակարգի մի շարք կարևոր ոլորտները կանոնակարգող նոր օրենքներ և գործող օրենքների փոփոխություններ ընդունվեցին Ազգային ժողովի կողմից:

Դրանցից առաջինը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխություններն են: Այս օրենքի փոփոխությունները հիմնականում պայմանավորված են իրավական ակտերի մասին օրենքի փոփոխություններով, ըստ որի՝ իրավաբանական անձանց իրավունքների սահմանափակում կամ նրանց նկատմամբ պարտավորությունների սահմանում կարող է իրականացվել միայն օրենքով: Այս պահանջի հիման վրա ՀՀ կենտրոնական բանկի մասին օրենքում ամրագրվել են Կենտրոնական բանկի կողմից իրականացվող ստուգումների կարգը, Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված անձանց պատասխանատվության ենթարկելու հիմքերը, որոնք նախկինում կանոնակարգվում էին ենթաօրենսդրական ակտերով:

2005 թվականի հուլիսի 1-ից Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը ՀՀ տարածքում գործող որևէ բանկի անվճարունակ ճանաչվելու դեպքում հատուցելու է ֆիզիկական անձանց երաշխավորված ավանդները: Այս ոլորտում հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» և այլ բանկային օրենքների համաձայն: Ավանդների երաշխավորման ինստիտուտի հիմնադրումը նպատակաուղղված է երկրի բանկային համակարգի հուսալիության, բանկային համակարգի նկատմամբ հանրության վստահության ապահովմանը և ավանդատուների շահերի պաշտպանությանը: Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը կազմավորվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ որպես շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ: Հիմնադրամի միջոցներն են՝ բանկերի կողմից կատարվող երաշխիքային վճարները, դրանց կառավարումից ստացված եկամուտները, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված միջոցները, այդ թվում՝ ստացված վարկերը, փոխառությունները, երաշխիքները, դրամաշնորհները, նվիրատվությունները և նվիրաբերությունները, ընդ որում՝ Հիմնադրամի միջոցները կուտակվում են Կենտրոնական բանկում գտնվող՝ Հիմնադրամի հատուկ հաշվում և օգտագործվում են բացառապես երաշխավորված ավանդների հատուցման նպատակներով: Հիմնադրամի միջոցները կառավարվում են անվտանգության և իրացվելիության չափանիշներից ելնելով:

Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող օրենքի շրջանակներում առևտրային բանկերը ավանդների երաշխավորման հիմնադրամին կատարում են պարտադիր երաշխիքային վճարներ՝ պարբերական, միանվագ և լրացուցիչ, ընդ որում՝ պարբերական երաշխիքային վճարները իրականացվում են եռամսյակը մեկ՝ ֆիզիկական անձանց միջին ավանդների 0,05%-ի չափով, միանվագ վճարները կատարվում են նոր ստեղծվող բանկերի կողմից, իսկ

լրացուցիչ վճարները՝ Հիմնադրամի միջոցների անբավարարության դեպքում: Երաշխիքային վճարները կատարվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

Ըստ օրենքի, Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են ֆիզիկական անձանց բանկային ավանդները (դրամային և արտարժութային), այդ թվում՝ բանկում բացված հաշվարկային, ընթացիկ, ժամկետային, խնայողական կամ այլ հաշվի վրա գտնվող դրամական միջոցները, դրանց վրա հաշվարկված տոկոսները, ինչպես նաև անմիանական արժեթղթերը (բացառությամբ բաժնետոմսերի):

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերն են՝

1.միայն դրամային ավանդի դեպքում՝ երկու միլիոն դրամ,

2. միայն արտարժութային ավանդի դեպքում՝ մեկ միլիոն դրամ,

3. և՛ դրամային (մեկ միլիոնից ավել) և՛ արտարժութային ավանդների դեպքում՝ մինչև երկու միլիոն դրամ,

4. և՛ դրամային (մեկ միլիոնից պակաս) և՛ արտարժութային ավանդների դեպքում՝ դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ մինչև մեկ միլիոն դրամ:

Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժութային ավանդները նույնպես համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:

Հիմնադրամի կողմից երաշխավորված ավանդների հատուցման գործընթացը սկսելու հիմք է հանդիսանում երաշխավորված ավանդների հատուցման դեպքը տեղի ունենալը՝ բանկը անվճարունակ կամ սնանկ ճանաչելը, և եթե Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ բանկը ի վիճակի չէ օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում վերադարձնել ավանդները:

Հիմնադրամը ձշված դեպքը տեղի ունենալու վերաբերյալ Կենտրոնական բանկից ստանում է տեղեկություն՝ դեպքը տեղի ունենալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո, եռօրյա ժամկետում, որոշում է կայացնում երաշխավորված ավանդների հատուցման գործընթացը սկսելու մասին և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում և առնվազն հանրային մեկ լրատվամիջոցով հայտարարություն է հրապարակում այդ մասին: Հատուցումն իրականացնում է անվճարունակ ճանաչված բանկի կամ իր կողմից ընտրված այլ բանկի միջոցով: Ավանդատուները կարող են երաշխիքային վճարում իրականացնող բանկին երաշխավորված ավանդները ստանալու վերաբերյալ դիմում ներկայացնել մեկ տարվա ընթացքում:

Երաշխավորված դրամային և արտարժութային ավանդները հատուցվում են Հայաստանի Հանրապետության դրամով, ընդ որում՝ արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի սահմանած պաշտոնական փոխարժեքով:

Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, ապա՝ արտարժութային ավանդները:

Երաշխավորված ավանդի հատուցման դեպքում ավանդատուն անվճարունակ բանկի նկատմամբ իր պահանջի իրավունքը պահպանում է բանկային ավանդի և հատուցված երաշխավորված ավանդի տարբերության չափով: Բանկային ավանդի և հատուցված երաշխավորված ավանդի տարբերությունը

ավանդատուին է վերադարձվում «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Տարվա ընթացքում փոփոխություններ են իրականացվել նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Փոփոխությունների պատճառը բանկային համակարգի՝ վարկային ռիսկից կորուստների վերաբերյալ ԿԲ կողմից կատարված ուսումնասիրություններն են, համաձայն որոնց՝ խոշոր վարկերը երկու անգամ ավելի հաճախ են խնդրահարույց դառնում, քան փոքր կամ միջին ծավալ ունեցող վարկերը, հետևաբար բանկերի զգալի կորուստների պատճառ հանդիսանում: Այս խնդրի լուծման նպատակով առևտրային բանկերի նկատմամբ սահմանվել է նոր նորմատիվային պահանջ՝ բոլոր խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը: Ընդ որում, խոշոր փոխառությունների հաշվարկում այսուհետև (2005թ. ապրիլի 1-ից) ներառվում են նաև այլ բանկերում թղթակցային հաշիվները, որոնք նախկինում այդ հաշվարկում չէին ներառվում: Տվյալ նորմատիվը ուղղված է ինչպես բանկերում վարկային ռիսկի նվազեցմանը, այնպես էլ բանկերի հաշվեկշիռներում ակտիվների կենտրոնացման մակարդակի նվազեցմանը:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխություններով ամրագրվել են նաև բանկերի և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ անձանց դուստր կազմակերպություններում կոնսոլիդացված (համախմբված) վերահսկողության վերաբերյալ ընթացակարգերը: Մասնավորապես, Կենտրոնական բանկին իրավասություն է տրվում ստուգումներ անցկացնելու առևտրային բանկերի դուստր կազմակերպություններում՝ ՀՀ կենտրոնական բանկի մասին օրենքով սահմանված կարգով: Տվյալ փոփոխությունը նպատակ ունի բացահայտել դուստր կազմակերպություններից բանկերին սպառնացող ռիսկերը և առավելագույնս զերծ պահել դրանցից:

Օրենքում կատարված հաջորդ փոփոխությունը վերաբերում է բանկերի ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ժամկետներին: Ներկայումս, օրենսդրության համաձայն, հարկային մարմիններին տարեկան ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ժամկետ է սահմանված ֆինանսական տարվան հաջորդող ապրիլի 15-ը: Սակայն առևտրային բանկերի համար, նախկին գործող օրենքի համաձայն, ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար սահմանված էր վեց ամիս: Տվյալ տարբերությունը որոշ չափով կարգավորելու, ինչպես նաև հաշվետվությունների հրապարակման միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով՝ համապատասխան փոփոխություններ կատարվեցին «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, համաձայն որոնց՝ այսուհետև առևտրային բանկերը արտաքին աուդիտի արդյունքները և տարեկան ֆինանսական հաշվետվությունները պարտավոր են հրապարակել մինչև հաշվետու ֆինանսական տարվան հաջորդող մայիսի 1-ը:

Վարկային ռեգիստրի՝ որպես վարկային ռիսկը նվազեցնող կառույցի դերը և վարկային ռեգիստրի կողմից վարկային տեղեկատվության շրջանառման արդյունավետությունը բարձրացնելու նկատառումներով պարտադրվում է հրապարակել վարկային ռեգիստրում առկա անպարտաճանաչ խոշոր (բանկի՝ պահանջվող նվազագույն նորմատիվային կապիտալի 5%-ը գերազանցող) պարտապանների ցանկը: Այս կարգը օգնում է բանկերին խուսափել անպարտաճանաչ վարկառուներին նոր վարկեր տրամադրելուց, ինչպես նաև նպաստում է վարկառուների պատասխանատվության բարձրացմանը: Տվյալ պահանջը ամրագրվել է «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխություններում:

Վարկային ռեգիստրը համակարգված տվյալների համախումբ է, որտեղ հավաքվում, մշակվում և վարկատու կազմակերպություններին (բանկերին և վարկային կազմակերպություններին) են տրամադրվում տեղեկություններ՝ բանկային համակարգից վարկեր ստացած սուբյեկտների վարկարժանության վերաբերյալ: Վարկային տեղեկատվության շրջանառումն ապահովող վարկային ռեգիստրը դարձել է բանկային համակարգի բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտ օղակներից մեկը: Այն գործում է հետևյալ մեխանիզմով. բանկերը ռեգիստրին տրամադրում են պահանջվող տեղեկատվությունը՝ սահմանված ֆորմատներով, անընդհատ թարմացնում տեղեկատվությունը և, անհրաժեշտության դեպքում, իրենց հերթին ռեգիստրից ստանում են տեղեկատվություն՝ հավանական և առկա վարկառուների

վերաբերյալ: Բանկերը վարկային ռեգիստրին տեղեկատվություն են տրամադրում վարկի ծավալի, ժամկետայնության, մարումների, գրավի, երաշխիքի և այլ չափանիշների վերաբերյալ: Միևնույն ժամանակ, նաև տեղեկություններ են գրանցվում վարկառուի ինքնության վերաբերյալ՝ անվանումը, հարկային կողը, անձնագրի տվյալները և այլն: Այս տեղեկատվության հիման վրա ձևավորվում են վարկային պատմություններ, որոնք օգտագործվում են առևտրային բանկերի կողմից վարկառուի վարկարժանությունը գնահատելու, ինչպես նաև այլ բանկերի նկատմամբ ստանձնած պարտավորությունները բացահայտելու նպատակով: Դրական վարկային բնութագիրը հեշտացնում է հաճախորդի վարկավորման գործընթացը, հիմք հանդիսանում հետագայում ավելի մեծ վարկեր տրամադրելու համար: Վարկային պատմությունները հաճախ հանդիսանում են այն երաշխիքը, որի հիման վրա տրամադրվում են վարկային քարտեր, բացվում են վարկային գծեր՝ սպառողական նպատակների համար: Զարգացած երկրներում վարկային պատմության բացակայությունը առևտրային բանկերի կողմից դիտվում է որպես ցածր վարկարժանության հայտանիշ: Վարկային պատմության ուսումնասիրությունը առևտրային բանկերին հնարավորություն է տալիս զգալի չափով խուսափելու հակասական տեղեկատվության հրջանառման բացասական հետևանքներից՝ տրամադրելով վարկային ռեսուրսները վարկարժան վարկառուներին և խուսափելով անպարտաճանաչ վարկառուներից:

ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրում հաշվառվում է մոտ 80 հազար վարկային պատմություն, որը շարունակական աճի միտում ունի: Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վարկային ռեգիստրի միջոցով օրական ստուգվում է միջին հաշվարկով 70-80 վարկային պատմություն: Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի պահանջել իր մասին վարկային ռեգիստրում առկա ամբողջ տեղեկատվությունը՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր:

Առևտրային բանկերում Կենտրոնական բանկի կողմից նշանակվող ժամանակավոր ադմինիստրացիայի ընթացակարգերի թափանցիկությունը բարձրացնելու նկատառումներից ելնելով՝ փոփոխություններ են կատարվել «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Ըստ այդմ՝ ժամանակավոր ադմինիստրացիա նշանակելու մասին Կենտրոնական բանկի որոշումը պետք է հրապարակվի մամուլում: Ժամանակավոր ադմինիստրացիայի գործունության հետ կապված՝ նախկինում Կենտրոնական բանկի ենթաօրենսդրական ակտերով կարգավորվող ընթացակարգերը նույնպես հստակ և մանրամասն ամրագրվում և կարգավորվում են այս օրենքի համապատասխան դրույթներով:

Հայաստանի Հանրապետությունը, որպես Եվրոխորհրդի անդամ երկիր, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով ՀՀ օրենքները համապատասխանեցնում է միջազգային չափանիշներին, ակտիվ համագործակցում է Եվրոխորհրդի համապատասխան հարցերով զբաղվող կոմիտեի հետ: Այս ոլորտը կարգավորող՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով ՀՀ կենտրոնական բանկն ընդունվում է որպես փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի լիազորված մարմին: Օրենքը կարգավորում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների

օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարն իրականացնող մարմինների համակարգը, ինչպես նաև կանոնակարգում այդ մարմինների համագործակցության կարգն ու պայմանները, պատասխանատվությունը: Ըստ օրենքի՝ ֆինանսական ինստիտուտները հաշվետու են այս ոլորտի լիազոր մարմնին, պարտավոր են ֆինանսական գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը պահպանել մինչև 5 տարի, կասկածելի գործարքների մասին տեղեկացնել ֆինանսական դիտարկումների խմբին: Օրենքի ընդունման հետ կապված՝ համապատասխան լրացումներ են կատարվել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում, ըստ որի՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը սահմանվում է որպես ՀՀ կենտրոնական բանկի խնդիր:

2004 թվականին ընդունվել է նաև «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ նոր օրենքը: Համաձայն նոր օրենքի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ռեզիդենտների միջև ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, գույքի օգտագործման դիմաց փողային վճարումները, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների դիմաց վճարվող տոկոսավճարները, գնանշվում, ընդունվում են և իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Օրենքի մյուս կարևոր դրույթը վերաբերում է իրավաբանական անձանց կանոնադրական հիմնադրամի համալրմանը: Եթե նախկինում նոր ստեղծվող և գործող իրավաբանական անձինք, այդ թվում՝ նաև բանկերը, կանոնադրական հիմնադրամը կարող էին համալրել արտարժույթով, ապա համաձայն սույն օրենքի դրույթների՝ կանոնադրական հիմնադրամում փողային ներդրումները պետք է կատարվեն միայն ՀՀ դրամով: Օրենքով սահմանվել են նաև արժութային վերահսկողության մարմինները, վերջիններիս իրավասությունների շրջանակները, ինչը նախորդ օրենքով հստակ սահմանված չէր և չէր ապահովում գործուն լծակներ:

2004թ. ընթացքում մշակվել և հաստատվել է ՀՀ վճարահաշվարկային բնագավառը կարգավորող օրենքը «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին»: Օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը, լիցենզավորումը, գործունեության վերահսկողության իրականացման կարգն ու պայմանները, ինչպես նաև սահմանում է հաշվարկների վերջնականության կանոնները: Վճարահաշվարկային համակարգը վճարային գործիքների, քլիրինգի իրականացման, միջոցների փոխանցման և վերջնահաշվարկի կատարման ընդհանուր կանոնների, ընթացակարգերի և վերջիններս ապահովող տեխնիկածրագրային միջոցների ամբողջություն է, որի միջոցով ապահովվում է վճարման կատարումը շահառուին:

Վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոնները հաստատում է վճարահաշվարկային համակարգի օպերատորի կառավարման իրավասու մարմինը, որը պատասխանատու է վճարահաշվարկային համակարգի գործունեության համար և որը համակարգի այլ մասնակիցների կողմից լիազորված է իրականացնել քլիրինգ և (կամ) վերջնահաշվարկ: ՀՀ վճարահաշվարկային համակարգի

մասնակիցներ կարող են լինել Կենտրոնական բանկը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերն ու օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը (այսուհետ՝ բանկ), վճարահաշվարկային կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու իրավասություն ունեցող այլ անձինք, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ այն կազմակերպությունները, որոնք իրենց երկրում իրավունք ունեն իրականացնել սույն օրենքով սահմանված վճարահաշվարկային և (կամ) նմանատիպ ծառայություններ:

Օրենքում սահմանված են այն վճարահաշվարկային համակարգերի շրջանակները, որոնց նկատմամբ ՀՀ ԿԲ կողմից իրականացվում է վերահսկողությունը և կարգավորումը, վճարահաշվարկային համակարգերի վերահսկողության իրականացման մեխանիզմները, նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտման համար վճարահաշվարկային համակարգի օպերատորի և մասնակիցների նկատմամբ կիրառվող պատասխանատվության տեսակները, չափերը, կիրառվող պատժամիջոցները: Հայաստանի Հանրապետության տարածքում վճարահաշվարկային համակարգի և

դրա մասնակիցների գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կենտրոնական բանկը: Կենտրոնական բանկը կարող է հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորից և այլ մասնակիցներից, ինչպես նաև արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի մասնակիցներից պահանջել վճարահաշվարկային ծառայությունների մատուցման հետ կապված տեղեկատվություն, անգամ եթե այդ տեղեկությունը բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք կազմող տեղեկություն է:

ՀՀ-ում վճարահաշվարկային ծառայություններ են համարվում բանկային հաշիվների բացումը և վարումը, հայկական դրամով, արտարժույթով՝ ֆիզիկական և իրավաբանական անձանցից և անձանց ուղղված վճարումների ընդունումը և կատարումը ինչպես բանկային հաշիվներով, այնպես էլ առանց բանկային հաշիվների, վճարային քարտերի, չեկերի, էլեկտրոնային փողերի և Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած այլ վճարային գործիքների թողարկումը, սպասարկումը և իրացումը, պրոցեսինգի, քլիրինգի, երրորդ անձանց համար դրամարկղային գործառնությունների իրականացումը:

Օրենքով կարգավորվում է նաև բանկ չհանդիսացող՝ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների (վճարահաշվարկային կազմակերպությունների) գործունեությունը և այդ նպատակով սահմանված են վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու լիցենզիա ստացող կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակը, լիցենզիայի տրամադրման պայմանները, կարգը և պահանջները:

2004 թվականին ՀՀ կենտրոնական բանկը մի շարք փոփոխություններ է կատարել նաև իր կողմից հաստատվող իրավական ակտերում:

Առևտրային բանկերում իրականացված ստուգումների ընթացքում էական բացեր են հայտնաբերվել բանկերի ներքին հսկողության համակարգերում, որը մեծ ազդեցություն ունի բանկի ռիսկայնության բարձրացման վրա: Այս խնդրի լուծման համար կարևոր նշանակություն ունեցող նախաձեռնություններից էր բանկերի գործունեության ծավալներին և ռիսկայնությանը

համարժեք ներքին հսկողության համակարգի նվազագույն պայմանները սահմանող փաստաթղթի մշակումը Կենտրոնական բանկի կողմից: Փաստաթղթում մասնավորապես սահմանվում են բանկի խորհրդի, գործադիր մարմնի՝ արդյունավետ ներքին հսկողությանը վերաբերող պարտականությունները, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի, ներքին աուդիտի, բանկի կազմակերպական կառուցվածքի և աշխատաոճի, ռիսկերի կառավարման համակարգերի նվազագույն պայմանները:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2004 թվականին հաստատվել և գործողության մեջ են դրվել թիվ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» և թիվ 39 «Ֆինանսական գործիքներ, ճանաչումը և չափումը» ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտները, որոնց ընդունումը հետաձգվում էր առևտրային բանկերի ակտիվների դասակարգման կարգի և այս ստանդարտների միջև անհամապատասխանության պատճառով: Խնդիրը լուծվել է հետևյալ կերպ. հրապարակային հաշվետվություններում պահուստները արտացոլվելու են վերոնշյալ ստանդարտների պահանջներին համապատասխան, սակայն, վերահսկողական նպատակներից ելնելով, բանկերը ակտիվների հնարավոր կորուստների պահուստը ձևավորելու են համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և Ֆինանսների նախարարության կողմից 1999թ. համատեղ հաստատված՝ «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»:

Ինչպես նշվեց, բանկային համակարգում կենտրոնացման ռիսկի նվազեցման և սահմանափակման համար սահմանվել է բոլոր խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվ, որի հիման վրա փոփոխություններ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում: Մասնավորապես, խոշոր փոխառուների պարտավորությունների հանրագումարի առավելագույն չափի տնտեսական նորմատիվը՝ $Ն3^2$, սահմանվել է հիմնական կապիտալի 500%-ի չափով, որի հաշվարկում ներառվել են նաև թղթակցային հաշիվները:

Այդ նույն փոփոխություններով սահմանվել են նաև $Ն3^1$, $Ն3^2$, $Ն4^1$ և $Ն4^2$ նորմատիվների հաշվարկման նոր ձևերը: Այսպես. 2005 թվականի հուլիսի 1-ից վարկառուների նկատմամբ բոլոր պահանջները (բացառությամբ «նոստրո» թղթակցային հաշիվների, միջբանկային ավանդների, օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի նկատմամբ պահանջների) նորմատիվների հաշվարկին մասնակցելու են 100% ռիսկի կշռով:

Բանկի հետ կապված մեկ փոխառուի ու նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ ռիսկերը սահմանափակելու և բանկի հետ կապված անձանց վարկավորումը չխրախուսելու համար, բանկի հետ կապված բոլոր անձանց պարտավորությունների գծով նորմատիվը սահմանվել է 20%՝ նախկին 50%-ի փոխարեն (գործողության մեջ է 2005թ. ապրիլի 1-ից):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2003 և 2004 թվականներին բավականին երկար արտարժութային դիրքեր պահելու արդյունքում բանկային համակարգը զգալի կորուստներ է կրել

արտարժույթների վերագնահատումներից: Առևտրային բանկերի արտարժութային ռիսկերի սահմանափակման և կորուստներից զերծ պահելու նկատառումներից ելնելով՝ փոփոխվել են արտարժութային դիրքի նորմատիվային պահանջները: Համաձայն նոր պահանջների՝ փոփոխվել է արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկման կարգը. առաջին և երկրորդ խմբի արտարժութային դիրքերը սահմանափակող նորմատիվները ամբողջությամբ տարանջատվել են միմյանցից: Ընդ որում, երկրորդ խմբի արտարժութային զուտ դիրքի նկատմամբ պահանջները չեն փոխվել, սակայն համախառն դիրք է սահմանվել առաջին խմբի արժույթների համար, որը 2005թ. ապրիլի 1-ից չի կարող գերազանցել ընդհանուր կապիտալի 20%-ը, իսկ 2005թ. հոկտեմբերի 1-ից՝ 15%-ը: Բացի այդ, սահմանվել է նաև արտարժույթի տնօրինման նորմատիվ առանձին արժույթների գծով. 2005թ. ապրիլի 1-ից՝ առավելագույնը ընդհանուր կապիտալի 15%-ը, հոկտեմբերի 1-ից՝ 10%-ը:

Վարկային կազմակերպությունների գործունեության համար առավել նպաստավոր պայմանների ստեղծման, դրանց զարգացումը խթանելու, ինչպես նաև 2003-2004 թվականներին վարկային կազմակերպությունների գործունեության ընթացքում հայտնաբերված հաշվետվական բացթողումները վերացնելու նպատակով փոփոխություններ են կատարվել վարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական ակտերում: Նոր կարգերի համաձայն՝ հիմնական տնտեսական նորմատիվները (բացառությամբ ընդհանուր կապիտալի և կանոնադրական կապիտալի նվազագույն չափի վերաբերյալ պահանջների) տարածվում են միայն այն վարկային կազմակերպությունների վրա, որոնք հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ են ներգրավում: Վարկային կազմակերպությունների գործունեության դաշտում կատարված նորմատիվային մեղմացումները պայմանավորված են այն հանգամանքով, որ վարկային կազմակերպությունները հիմնականում տեղաբաշխում են իրենց մասնակիցներից ներգրաված միջոցները, հետևաբար նրանց գործունեության հետևանքները հասարակության համար նվազ ռիսկային են: Ըստ այդմ, ավելի ընդարձակ ծառայություններ մատուցելու ցանկության դեպքում վարկային կազմակերպությունը կարող է մտնել ավելի խիստ նորմատիվային դաշտ՝ իր գործունեության ռիսկայնությանը համապատասխան:

ԲԱՆԿԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

2004 թվականին ՀՀ կենտրոնական բանկ լիցենզիա ստանալու հայտ են ներկայացրել և լիցենզավորվել 3 վարկային կազմակերպություններ: Առևտրային բանկի լիցենզիա ստանալու համար բանկի նախաձեռնողների մեկ դիմում է ստացվել, որը 2004 թվականին ՀՀ ԿԲ կողմից նախնական հավանության է արժանացել*:

Ըստ հեռակա վերահսկողության արդյունքների՝ 2004 թվականին բանկային օրենսդրության խախտումներ են թույլ տվել 20 բանկեր (1366 խախտում) և 9 վարկային կազմակերպություններ (366 խախտում): Խախտումներից 142-ը կարճվել են, իսկ գերակշիռ մասի նկատմամբ որպես պատժամիջոց կիրառվել է նախազգուշացում:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից թույլ տրված խախտումները և կիրառված պատժամիջոցները 2004 թ.

	Առևտրային բանկեր	Վարկային կազմակերպություններ
Խախտման տեսակ		
Հաշվապահական հաշվառման	57	15
Ակտիվների դասակարգման	176	21
Օրենսդրական	356	20
Նորմատիվային	60	200
Հանձնարարականի չկատարում	83	6
Հաշվետվությունների ուշացում	1	
Անարժանահավատ տվյալներ	183	75
Վարկային ռեգիստր	450	29
Պատժամիջոցներ		
Տուգանք բանկին/ վարկային կազմ.	35	65
Տուգանք ղեկավարին	181	50
Տույժ	1	
Նախազգուշացում	1024	230
Ղեկավարին մասնագիտական որակավորման վկայականից զրկում	1	
Չկիրառում	1	
Կարճում	123	19

** 2005 թվականի առաջին եռամսյակի ընթացքում «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ն ստացել է բանկային գործունեության լիցենզիա:*

2004 թվականի ընթացքում իրականացվել են 25 ստուգումներ՝ 5 համալիր, 17 նպատակային ստուգումներ բանկերում և 3-ը՝ վարկային կազմակերպություններում: Տեսչական ստուգումներ անցած առևտրային բանկերի ընդհանուր ակտիվների հանրագումարը կազմել է 542 մլրդ դրամ:

Իրականացված ստուգումների ընթացքում արձանագրված խնդիրները հիմնականում վերաբերում են բանկերում ներքին հսկողության համակարգերի անկատարությանը և կորպորատիվ կառավարման սկզբունքների բացակայությանը: Վարկային կազմակերպություններում արձանագրված թերությունները գլխավորապես վերաբերում են հաշվապահական հաշվառման կանոնների խախտումներին, աշխատակիցների և ղեկավարների մասնագիտական պատրաստվածության և ներքին հսկողության համակարգերի անբավարար մակարդակին:

Տեղերում վերստուգումների արդյունավետությունը և վերահսկողության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը

	2002 թվական	2003 թվական	2004 թվական
Բանկային վերահսկողության վարչության աշխատակիցների թիվը	34	39	41
Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները (տարեկան միջին)	195.6 մլրդ դրամ	253.6 մլրդ դրամ	365.8 մլրդ դրամ
Բանկային վերահսկողության վարչության մեկ աշխատակցի միջին ծանրաբեռնվածությունը[1]	5.8 մլրդ դրամ	6.5 մլրդ դրամ	8.9 մլրդ դրամ
Տարվա ընթացքում իրականացված ստուգումների թիվը, այդ թվում՝	19	17	25
համալիր ստուգում	4	7	5
նպատակային ստուգում	15	10	17
վարկային կազմակերպություն	-	-	3
Ստուգում անցած առևտրային բանկերի ընդհանուր ակտիվների մեծությունը ստուգման պահին	36.0 մլրդ դրամ	85.8 մլրդ դրամ	542 մլրդ դրամ[2]
Ստուգման մասնակիցների թիվը	31	42	94
Մեկ վերահսկողի միջին ծանրաբեռնվածությունը վերստուգումների ընթացքում	1.2 մլրդ դրամ	2.0 մլրդ դրամ	5.7 մլրդ դրամ

2005 թ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվել են նաև արտարժույթի փոխանակման կետերի ստուգումներ: Ստուգվել են 177 փոխանակման կետեր, որոնցից 21-ի գործունեությունը կասեցվել է, իսկ 37-ի լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել: 24 դեպքում խախտումների դիմաց պատժամիջոցները կարճվել են, իսկ 92 դեպքում փոխանակման կետերը տուգանք են վճարել:

[1] Այս ցուցանիշը անհրաժեշտ է դիտարկել դինամիկայի մեջ, քանի որ ավելի մեծ (փոքր) բանկային համակարգ ունեցող երկրների հետ համեմատական վերլուծության դեպքում բնականաբար այն անհամեմատ ավելի մեծ (փոքր) կարող է լինել:

[2] Վերստուգված ակտիվների ծավալը գերազանցում է բանկային համակարգի ակտիվների ծավալը, քանի որ որոշ բանկեր տարվա ընթացքում կրկնակի վերստուգում են անցել:

ԿԱԴՐԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ՀԵՏ

2004թ. բանկային վերահսկողության աշխատակիցները մասնագիտական որակավորման բարձրացման և միջազգային փորձին ծանոթանալու համար մասնակցել են վերահսկողության արդիական խնդիրներին վերաբերող մի շարք դասընթացների և կոնֆերանսների: Ուսուցանված և քննարկված հիմնական թեմաներն են՝ «Բանկային վերահսկողության արդի խնդիրները», «Կապիտալի Բազելյան նոր համաձայնագիր (Բազել II)», «Բանկային ռիսկերի գնահատում և վերահսկողություն», «Պրոբլեմային բանկերի լուծարում», «Ֆինանսական կոնգլոմերատների վերահսկողություն» և այլն:

Բանկային վերահսկողների վերապատրաստման գործում մեծ ներդրում է ունեցել ԱՄՆ Դաշնային պահուստային բանկի նախաձեռնությամբ Երևանում կազմակերպված՝ «Բանկերի վերլուծություն և ստուգում» թեմայով միջազգային սեմինարը, որին մասնակցել են ինչպես ՀՀ կենտրոնական բանկի, այնպես էլ տասներկու օտարերկրյա կենտրոնական բանկերի ներկայացուցիչներ: Սեմինարի ընթացքում քննարկվել են ռիսկերի վրա հիմնված վերահսկողությանը, ռիսկերի գնահատման համակարգերին վերաբերող շատ հարցեր, հեռակա և տեղերում վերահսկողության բազմաթիվ կիրառական խնդիրներ:

Կենտրոնական բանկի կադրերի վերապատրաստմանը ակտիվորեն օժանդակել են Արժույթի միջազգային հիմնադրամը, Անգլիայի բանկի՝ կենտրոնական բանկերի ուսուցողական կենտրոնը, Ֆրանսիայի բանկը, Գերմանիայի Բունդեսբանկը, Նիդեռլանդների, Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկերը, Միջազգային հաշվարկների բանկը, Լեհաստանի ազգային բանկը, Ֆինանսական կայունության ինստիտուտը և այլն: Վերապատրաստման մի քանի ծրագրեր իրականացվել են ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից տրամադրված տեխնիկական օժանդակության շրջանակներում: Կադրերի վերապատրաստման թեմաները հիմնականում շոշափել են բանկային վերահսկողության արդիական խնդիրներ՝ բանկերում ռիսկերի կառավարման ու գնահատման, վերահսկողական նոր մոտեցումների կիրառման, Բազելյան նոր համաձայնագրի հիմնական դրույթների, փողի լվացման դեմ պայքարի հարցերը:

Կիրառական տեսանկյունից արդյունավետ է եղել փորձի փոխանակման շրջանակներում Բրազիլիայի առևտրային բանկերից մեկում կազմակերպված վերապատրաստումը, որի ընթացքում քննարկվել են գործնական վերահսկողության արդյունավետության բարձրացման արդիական մոտեցումներ, տեղերում ստուգումների իրականացման, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում կիրառվող վերահսկողական մեթոդներ:

ՀՀ-ում վարկային ռիսկի մոդելի ներդրման, ՔԱՍԵԼՍ համակարգի կատարելագործման խնդիրների շրջանակներում, զարգացած երկրներում ռիսկերի կառավարման փորձը ուսում-

նասիրելու հնարավորություն են ընձեռել Միջազգային հաշվարկների բանկի, Ֆրանսիայի բանկի, Ֆինանսական կայունության ինստիտուտի կողմից կազմակերպված դասընթացները:

Կապիտալի Բազելյան նոր համաձայնագրի հետ կապված խնդիրներ են շոշափվել Նիդեռլանդների բանկի կողմից կազմակերպված՝ «Կապիտալի Բազելյան նոր համաձայնագիր» և Գերմանիայի Բունդեսբանկի՝ «Բանկային վերահսկողությունը Կապիտալի Բազելյան նոր համաձայնագրի ներքո» թեմաներով սեմինարների ժամանակ: Քննարկվել են Բազել - 2-ի հիմնական սկզբունքները, ռիսկերի սահմանափակման նոր մոտեցումները և նոր համաձայնագրի ներդրման հետ կապված դժվարությունները: Սեմինարների արդյունքները կիրառական նշանակություն ունեն հատկապես ռիսկերի վրա հիմնված վերահսկողության իրականացման տեսանկյունից: Հետաքրքրական է ինչպես Բազել - 2 համաձայնագրի ստանդարտացված մոտեցումը, այնպես էլ ներքին վարկանիշային համակարգերի վրա հիմնված ակտիվների ռիսկայնության գնահատումը: Այս առումով ՀՀ կենտրոնական բանկը աշխատանքներ կձեռնարկի Բազել - 2-ի կիրառելիության գնահատման և բանկերի հետ համատեղ նոր համաձայնագրի ներդրման հեռանկարային ծրագրերի մշակման համար:

Բանկային վերահսկողության արդյունավետության բարձրացման համար Կենտրոնական բանկի Վերահսկողության, Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչությունները համագործակցում են այլ երկրների վերահսկողների հետ: Պարբերաբար կազմակերպվող կոնֆերանսների, հանդիպումների ընթացքում քննարկվում են բանկային վերահսկողության հիմնախնդիրների լուծման, վերահսկողական գործիքների կատարելագործման հնարավոր ուղիները: Տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների հետ պարբերաբար իրականացվում է կարգավորման դաշտին վերաբերող տեղեկատվության փոխանակում:

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2004 ԹՎԱԿԱՆԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը

2003 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 20 բանկեր՝ 232 մասնաճյուղերով, որոնցից 19-ը գործել է ընդհանուր վերահսկողության դաշտում և մեկ բանկ՝ ԿԲ կողմից նշանակված ժամանակավոր ադմինիստրացիայի ներքո:

Տարվա ընթացքում նոր բանկ մուտք չի գործել բանկային համակարգ: Առողջացման ծրագրի իրագործման արդյունքում տարեսկզբին ժամանակավոր ադմինիստրացիայի ներքո գործող «Հայկապ բանկ» ՓԲԸ-ն տարեվերջին տեղափոխվել է ընդհանուր վերահսկողության դաշտ: 2004թ. չորրորդ եռամսյակում «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ին տրվել է բանկային գործունեության լիցենզիա ստանալու նախնական համաձայնություն:

2004 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում դարձյալ գործել են 20 առևտրային բանկեր (233 մասնաճյուղերով), ընդ որում՝ բոլորն էլ գործունեություն են ծավալել ընդհանուր վերահսկողության դաշտում:

Առևտրային բանկերի բոլոր գլխամասերը և մասնաճյուղերի մեկ երրորդը գտնվում է Երևանում:

Ֆինանսական միջնորդությունը բնութագրող ցուցանիշները վկայում են, որ բանկային համակարգը երկրի տնտեսությունում հետզհետե ընդլայնում է իր մասնակցության շրջանակները: Այսպես, տարեվերջին համակարգի ընդհանուր ակտիվները կազմել են ՀՆԱ 19.2%-ը՝ վարկերը՝ 7.0%-ը, դեպոզիտները՝ 12.0%-ը՝ նախորդ տարվա համապատասխանաբար 17.3%-ի, 5.8%-ի և 11.2%-ի փոխարեն:

Մրցակցությունը ՀՀ բանկային համակարգում

2004 թվականին բանկային համակարգում արձանագրվել են մրցակցության մակարդակի աճի որոշակի միտումներ, որի ապացույցներից է բանկային համակարգի ամփոփ ցուցանիշների գծով Հերֆինդալ-Հիրշմանի[3] կենտրոնացվածության գործակցի փոքր-ինչ նվազումը:

Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից

[3] Հերֆինդալ - Հիրշմանի գործակիցն ընդունում է 0-ից 1 միջակայքում արժեքներ և բնութագրում կենտրոնացվածությունը (0-ին մոտ արժեքները նշանակում են կենտրոնացվածության ցածր աստիճան):

	31.12.03	31.12.04
Ընդհանուր ակտիվներ	0.10	0.09
Ընդհանուր պարտավորություններ	0.12	0.10
Ընդհանուր կապիտալ	0.06	0.06
Տնտեսությանը տրամադրված վարկեր	0.09	0.09
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ	0.09	0.11
Ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորություններ (ներառյալ բանկային հաշիվներ)	0.23	0.18

Վերջին տարիներին ցածր է եղել կապիտալի և բարձր՝ դեպոզիտների կենտրոնացվածության գործակիցը:

Բանկային համակարգում կենտրոնացվածության մակարդակի նվազման հիմնական պատճառը խոշոր բանկերում մրցակցության աճն է, իսկ խոշոր և մանր բանկերի միջև բևեռացվածությունը շարունակում է պահպանվել և նույնիսկ՝ փոքր-ինչ մեծանալ: Այսպես՝ տարեսկզբին խոշորագույն 10 բանկերին բաժին էր ընկնում համակարգի ակտիվների 80%-ը և պարտավորությունների 83%-ը, իսկ տարեվերջին՝ համապատասխանաբար 81%-ը և 84%-ը: Սակայն խոշոր բանկերի միջև բևեռացվածությունը 2004 թվականին նվազել է. եթե տարեսկզբին համակարգի խոշորագույն բանկին բաժին էր ընկնում ակտիվների 24%-ը և պարտավորությունների 27%-ը, ապա տարեվերջին՝ համապատասխանաբար 18%-ը և 20%-ը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՊԻՏԱԼԸ [4]

Բանկային համակարգի կապիտալի զարգացման միտումները

2004 թվականի ընթացքում բանկային համակարգի հաշվեկշռային ընդհանուր կապիտալն ավելացել է 29.0%-ով (14.5 մլրդ դրամով) և կազմել 64.6 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճին հիմնականում նպաստել է բանկային համակարգի կողմից տարվա ընթացքում ապահովված անընդհատ շահույթը:

[4] Բանկային համակարգը 2003 թ. ներառել է ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 19 բանկերը, իսկ 2004 թվականին՝ 20 բանկերը (ներառյալ «Հայկապ բանկը»): Հրապարակման մեջ օգտագործվել են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունները՝ համաձայն «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի:

Տարվա ընթացքում կանոնադրական հիմնադրամն ավելացել է 3.4 մլրդ դրամով, գլխավոր պահուստը՝ 0.9 մլրդ դրամով: Կանոնադրական հիմնադրամի աճը հիմնականում ապահովվել է արտաքին աղբյուրների հաշվին, որի արդյունքում ոչ ռեզիդենտների մասնակցության տեսակարար կշիռը բանկերի կանոնադրական հիմնադրամում ավելացել է 5.9 տոկոսային կետով և կազմել 52.6%: Կանոնադրական հիմնադրամի աճին նպաստել է նաև 2005թ. հուլիսի 1-ից 5.0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի ապահովման պահանջը:

Հաշվետու տարում համակարգն ապահովել է աննախադեպ շահույթ՝ 17.2 մլրդ դրամի չափով (հիմնականում վարկերի ծավալային և որակական աճերի շնորհիվ), որի 6.9 մլրդ դրամը բաժին է ընկել «Հայկապ բանկին»՝ պայմանավորված բանկի նկատմամբ նախկինում ձևավորված պարտավորությունների մարմամբ: Սակայն, քանի որ «Հայկապ բանկը» նախորդ ժամանակաշրջաններից ուներ նաև մոտ 6.5 մլրդ դրամի չափով վնաս, ապա բանկի ընդհանուր (ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների) չբաշխված շահույթի մեծությունը կազմել է ընդամենը 453 մլն դրամ: Միևնույն ժամանակ, բանկային համակարգը նախորդ ժամանակաշրջանի շահույթից բաշխել է ընդհանուր 2.3 մլրդ դրամի չափով շահաբաժիններ և մոտ 1.2 մլրդ դրամի չափով միջոցներ նախորդ ժամանակաշրջանի շահույթից ուղղել է կանոնադրական հիմնադրամի համալրմանը: Արդյունքում՝ տարվա ընթացքում ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համընդհանուր չբաշխված շահույթը նախորդ տարվա համեմատ ավելացել է 7.2 մլրդ դրամով:

Համակարգի ընդհանուր կապիտալը և ընդհանուր ակտիվները տարվա ընթացքում ապահովել են նույնչափ՝ 29% աճ, հետևաբար ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը (լևերեջի գործակիցը) տարվա ընթացքում չի փոփոխվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 17.8%:

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը

Հաշվետու տարվա ընթացքում բանկային համակարգի վարկային ներդրումների աճն էապես գերազանցել է ընդհանուր կապիտալի աճը, որը պայմանավորել է ռիսկով կշռված ակտիվների առաջանցիկ աճը ընդհանուր և հիմնական նորմատիվային կապիտալների աճի համեմատ: Արդյունքում՝ տարվա ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը նվազել է 1.8, իսկ հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 2.4 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել 32.3% և 30.2%: ՀՀ տարածքում գործող բանկերի համարժեքության ցուցանիշները բավականաչափ գերազանցում են նորմատիվների՝ պահանջվող 12% և 8% մակարդակները: Կապիտալի վտանգվածության գնահատման առումով նշենք, որ բանկային համակարգի չաշխատող ակտիվների՝ ամբողջությամբ անհուսալի դասակարգելու դեպքում ստացվող վնասը կազմում է նորմատիվային ընդհանուր կապիտալի 7.3%-ը՝ նախորդ տարվա 7.6%-ի փոխարեն:

Առևտրային բանկերի սեփականատերերը

Ըստ սեփականության ձևի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող 20 առևտրային բանկերից 1-ը կոոպերատիվ բանկ է, 2-ը՝ սահմանափակ պատասխանատվությամբ, 2-ը՝ բաց բաժնետիրական, 15-ը՝ փակ բաժնետիրական ընկերություններ:


Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի մասնակիցներ (բաժնետերեր, փայատերեր) են 1642 ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնցից 61-ը՝ ոչ ռեզիդենտներ: Եթե բացառենք 2 բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ ունեցող բանկերը, ապա 18 բանկերի մասնակիցները 103 ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնցից 28-ը՝ ոչ ռեզիդենտներ: Երեք բանկերում բաժնեմասերի 100%-ը տնօրինում է մեկ անձ (իրավաբանական անձինք, որոնցից 2-ը ոչ ռեզիդենտներ են), իսկ յոթ բանկերում մեկ բաժնետեր տնօրինում է բաժնետոմսերի 50%-ից ավելի բաժնեմասը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկային համակարգի ներգրաված միջոցների զարգացման միտումները

2004 թվականի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն աճել են 28.8%-ով և տարեվերջին կազմել 298.9 մլրդ դրամ: Դրամով պարտավորություններն ավելացել են 27.6%-ով, իսկ արտարժույթով պարտավորությունները՝ 29.3%-ով, ինչի արդյունքում դրամով պարտավորությունների տեսակարար կշիռը փոքր-ինչ նվազելով՝ կազմել է 26.7%, որը վկայում է դոլարայնացման դեռևս բավականին բարձր մակարդակի մասին:

Գծապատկեր 1. Բանկային համակարգի պարտավորությունների աճի միտումները



Ընդհանուր պարտավորությունների աճը հիմնականում ապահովվել է ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդների աճի հաշվին:

Պարտավորությունների կազմում 2004 թվականին զգալի ավելացել են նաև բանկերի լորո թղթակցային հաշիվները՝ 101.8%-ով (3.0 մլրդ դրամով) և բանկերի նկատմամբ այլ պարտավորությունները՝ 40.4%-ով (6.6 մլրդ դրամով): Լորո թղթակցային հաշիվների աճը հիմնականում ապահովել են երկու բանկեր՝ ոչ ռեզիդենտ բանկերի լորո թղթակցային հաշիվների աճի հաշվին: Տարեվերջին լորո հաշիվների 52%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտ բանկերին, ընդ որում՝ գրեթե հավասարաչափ բաշխվել է Ռուսաստանում և Իրանում գործող բանկերի միջև:


Տարվա ընթացքում բանկային համակարգի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված ընդհանուր միջոցներն ավելացել են 24.1%-ով (44.1 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 227.0 մլրդ դրամ:

Նախորդ տարվա համեմատ 2004 թվականին բանկային համակարգում դրսևորված առանձնահատկություններից են.

- ժամկետային ավանդների աճի տեմպը գերազանցել է ցպահանջ ավանդների աճի տեմպը. ժամկետային ավանդներն ավելացել են 26.1%-ով (18.9 մլրդ դրամով), իսկ ցպահանջ ավանդները՝ 22.8%-ով (25.2 մլրդ դրամով)՝ նախորդ տարի՝ համապատասխանաբար 3.0% և 30.7%-ով,
- Ե՛վ ցպահանջ, և՛ ժամկետային ավանդների աճը հիմնականում ապահովվել է իրավաբանական անձանց հաշվին. իրավաբանական անձանցից ներգրաված միջոցներն ավելացել են 40.5%-ով, իսկ ֆիզիկական անձանցից ներգրաված միջոցները՝ 10.0%-ով (նախորդ տարի՝ համապատասխանաբար 3.3% և 34.6% աճ),
- Ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված ավանդների աճը ապահովվել է ռեզիդենտների հաշվին, որի արդյունքում ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ ավելացել է 5.7 տոկոսային կետով և կազմել 80.7%:


Հաշվետու տարում իրավաբանական անձանց ցպահանջ պարտավորությունների 30.1% աճը առավելապես պայմանավորվել է վերջիններիս հաշիվների խոշորացմամբ (իրավաբանական անձ-հաճախորդների քանակն ավելացել է ընդամենը 1%-ով, իսկ վերջիններիս ընթացիկ հաշիվներն ավելացել են 8%-ով): Ֆիզիկական անձանց ցպահանջ պարտավորությունների 12.8% աճը հիմնականում հաճախորդների բազայի ընդլայնման արդյունք է, որին էապես նպաստել է քարտային համակարգով աշխատավարձ տրամադրող կազմակերպությունների ցանկի ավելացումը (ֆիզիկական անձ-հաճախորդների քանակն ավելացել է 22%-ով, իսկ վերջիններիս հաշիվների քանակը՝ 29%-ով):

Գծապատկեր 2. Բանկային համակարգի ցպահանջ ավանդների աճի միտումները



Եվ իրավաբանական, և՛ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների՝ համապատասխանաբար 67.1% և 7.3% աճը հիմնականում պայմանավորվել է ժամկետային հաշիվների խոշորացումներով, քանի որ իրավաբանական անձանց ժամկետային հաշիվները տարվա ընթացքում ավելացել են ընդամենը 2%-ով, իսկ ֆիզիկական անձանց ժամկետային հաշիվները նվազել են 22%-ով:

Գծապատկեր 3. Բանկային համակարգի ժամկետային ավանդների աճի միտումները




Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը

2004 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում ծախսատար պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 91.4%: Ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունների բացառման դեպքում ծախսատար ժամկետային պարտավորությունների տեսակարար կշիռը կազմում է 46.1%:

Հաշվետու տարում ընդհանուր պարտավորությունների կազմում ցպահանջ պարտավորությունները (ֆիզիկական և իրավաբանական անձանց) նախորդ տարվա նման չեն դրսևորել առաջանցիկ աճի տեմպեր, և վերջինիս տեսակարար կշիռը նվազել է 3 տոկոսային կետով:

Գծապատկեր 4. Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը



1. Բանկային թղթակցային հաշիվներ, 2. Այլ պարտավորություններ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ), 3. Ցպահանջ պարտավորություններ, 4. Ժամկետային պարտավորություններ, 5. Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ, 6. Հաշվարկված վճարվելիք տոկոսներ, 7. Այլ պարտավորություններ

Համակարգի ընդհանուր պարտավորությունների միջին կշռված ժամկետայնությունը կազմում է մոտ կես տարի: Ներգրաված միջոցների 53%-ը ցպահանջ են (ավանդներ, բանկային հաշիվներ, թղթակցային հաշիվներ և այլ), 35%-ը՝ 1-ից 12 ամիս ժամկետայնությամբ և 12%-ը՝ մեկ տարուց ավելի ժամկետայնությամբ:

Առևտրային բանկերի հաճախորդները

2004 թվականի ընթացքում բանկային համակարգի կողմից սպասարկվող իրավաբանական և ֆիզիկական անձանց քանակն ավելացել է 20.1%-ով կամ 81.4 հազարով (գրեթե ամբողջությամբ ֆիզիկական անձանց աճի հաշվին) և տարեվերջին կազմել 487 հազար: Սպասարկվող ֆիզիկական անձ-հաճախորդների քանակը կազմել է 453.6 հազար, իսկ իրավաբանական անձ-

հաճախորդների քանակը՝ 33.4 հազար (մինչդեռ պետական ռեգիստրում տարեվերջի դրությամբ գրանցված են եղել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող 51.5 հազար տնտեսավարող սուբյեկտներ, որոնք պարտավոր են ունենալ բանկային հաշիվներ):


Տարվա ընթացքում բանկային հաշիվների քանակն ավելացել է 23.7%-ով և կազմել 503.1 հազար, որի 96%-ը՝ ընթացիկ և 4%-ը ժամկետային հաշիվներն են: Ընթացիկ հաշիվների քանակն ավելացել է 26.8%-ով կամ 102 հազարով (հիմնականում ֆիզիկական անձանց հաշիվների աճի արդյունքում) և տարեվերջին կազմել է 482.9 հազար: Ժամկետային հաշիվների քանակը նվազել է 21.9%-ով կամ 5.7 հազարով (ի հաշիվ ֆիզիկական անձանց ժամկետային հաշիվների նվազման) և տարեվերջին կազմել 20.2 հազար:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Բանկային համակարգի տեղաբաշխած միջոցների զարգացման միտումները


2004 թվականին ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 28.9%-ով (81.4 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 363.6 մլրդ դրամ:

Գծապատկեր 5. Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների միտումները



Ընդհանուր ակտիվների աճը հիմնականում ապահովվել է բանկերում թղթակցային հաշիվների (25.5 մլրդ դրամով) և տնտեսությանը տրամադրված վարկերի (36.8 մլրդ դրամով) աճի հաշվին:

Գծապատկեր 6. Բանկային համակարգի ակտիվների աճի միտումները



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ), 3. Պետական արժեթղթեր, 4. Վարկեր տնտեսությանը, 5. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 6. Հիմնական միջոցներ, 7. Այլ արժեթղթեր, 8. Լիզինգ, ֆակտորինգ, 9. Այլ ակտիվներ

Նոստրո թղթակցային հաշիվներն առանձնանում են կենտրոնացվածությամբ ինչպես աշխարհագրական առումով, այնպես էլ ըստ ռեզիդենտայնության: Թղթակցային հաշիվների 96.7%-ը տեղաբաշխված է ոչ ռեզիդենտ բանկերում (նախորդ տարի՝ 97.3%-ը): Ոչ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների ընդհանուր ծավալի 68%-ը ներդրված է բարձրակարգ վարկանիշ ունեցող ԱՄՆ բանկերում, 7.0%-ը՝ Ռուսաստանի, 24%-ը՝ եվրոպական և 1%-ը՝ այլ երկրների բանկերում:

ՀՀ պետական արժեթղթերում ներդրումների ծավալներն ավելացել են 16.9%-ով կամ 5.3 մլրդ դրամով և տարեվերջին կազմել են 36.6 մլրդ դրամ (ներառված են նաև ռեպո համաձայնագրերով ձեռք բերված և վաճառված արժեթղթերը): 2004 թվականին միջին ամսական կտրվածքով պետական կարճաժամկետ պարտատոմսերի տարեկան տոկոսադրույքը կազմել է 5.1%, պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերինը՝ 8.3%, որոնք 2003 թվականին կազմել են համապատասխանաբար 9.7% և 14.3%: Հատկանշական է, որ նույնիսկ տոկոսադրույքների նման նվազման դեպքում բանկային համակարգում արձանագրվել է պետական պարտատոմսերում ներդրումների աճ: Սա հիմնականում պայմանավորվել է, զգալի ցպահանջ պարտավորությունների առկայության պայմաններում, բարձր իրացվելի ակտիվների՝ անհրաժեշտ բավարար մակարդակի ապահովման նկատառումով:

Այլ արժեթղթերում ներդրումների ծավալներն ավելացել են 3.5 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 4.0 մլրդ դրամ:


Բանկային համակարգի հիմնական միջոցները տարվա ընթացքում աճել են 38.8%-ով և տարեվերջին կազմել 22.0 մլրդ դրամ, որը ընդհանուր կապիտալի 34.0%-ն է և ընդհանուր ակտիվների 6.0%-ը: Բոլոր բանկերում հիմնական միջոցների մեծությունը զիջել է ընդհանուր կապիտալի մեծությանը, ինչը վկայում է այն մասին, որ բանկերի հիմնական միջոցները ձեռք չեն բերված ի հաշիվ փոխառու միջոցների: Այս առումով 2005 թվականի հուլիսի 1-ից նորմատիվային հաշվարկներում նախատեսվում է խստացում. նորմատիվային կապիտալի մեծության հաշվարկում հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության 25 տոկոսը գերազանցող գումարի չափով նվազեցվում է բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար օգտագործվող հիմնական միջոցների մեծությունը:

Բանկային համակարգի տեղաբաշխած միջոցների կառուցվածքը

Բանկային համակարգի եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում տարեվերջին կազմել է 75.2%, ընդ որում, եթե բացառենք ցածր եկամտաբեր թղթակցային հաշիվները, ապա մնացյալ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կկազմի 58.1%:

Տարվա ընթացքում տնտեսությանը տրամադրված վարկերի աճի տեմպը զգալի գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, որը հանգեցրել է ակտիվների կազմում վարկերի տեսակարար կշռի 2 տոկոսային կետով աճի:

Գծապատկեր 7. Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ), 3. Պետական արժեթղթեր, 4. Վարկեր տնտեսությանը, 5. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 6. Հիմնական միջոցներ, 7. Այլ արժեթղթեր, 8. Լիզինգ, ֆակտորինգ, 9. Այլ ակտիվներ

Համակարգի ընդհանուր ակտիվների միջին կշռված ժամկետայնությունը տատանվում է կես տարուց մեկ տարվա շրջանակներում: Այսպես. տեղաբաշխված միջոցների 41%-ը ցպահանջ են, 42%-ը՝ 1-ից 12 ամիս ժամկետայնությամբ և 17%-ը՝ մեկ տարուց ավելի ժամկետայնությամբ (ընդ որում՝ ակտիվների միջին ժամկետայնությունը 2004 թվականին փոքր-ինչ ավելացել է՝ ի հաշիվ հիփոթեքային վարկերի աճի):

Բանկային համակարգի վարկային ներդրումները

Տարվա ընթացքում բանկային համակարգի վարկային ներդրումներն[5] ավելացել են 20.7%-ով (26.7 մլրդ դրամով) և կազմել 155.7 մլրդ դրամ: Դրամով վարկային ներդրումներն ավելացել են 29.8%-ով, իսկ արտարժույթով վարկային ներդրումները՝ 17.2%-ով, որի արդյունքում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում աճել է 2.1 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 29.6%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումները նվազել են 41.5%-ով և կազմել 15.9 մլրդ դրամ: Նվազումը հիմնականում պայմանավորվել է մեկ բանկի կողմից ոչ ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդների նվազումով:

Ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ավելացել են 37.3%-ով (38.0 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 139.8 մլրդ դրամ:

Հաշվետու տարում տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է վարկային ներդրումների աճ (արդյունաբերության ճյուղերը դիտարկվել են որպես մեկ համընդհանուր ճյուղ): 2004 թվականին դարձյալ առանձնահատուկ աճի միտում են դրսևորել սպառողական վարկերը. ավելացել են 69.4%-ով (16.1 մլրդ դրամով): Վարկավորման զգալի աճ է արձանագրվել նաև առևտրի ճյուղում՝ 47.3% (10.0 մլրդ դրամով), արդյունաբերության ճյուղում՝ 19.6% (5.8 մլրդ դրամով), հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտներում՝ 93.1% (2.5 մլրդ դրամով): Արդյունաբերության ճյուղում վարկավորման ծավալների մեծ աճ է գրանցվել սննդի արդյունաբերությունում՝ 34.3%-ով (3.6 մլրդ դրամով):

Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքում 2004 թվականին դարձյալ արձանագրվել է սպառողական վարկերի տեսակարար կշռի աճ: Բանկային համակարգի վարկային ներդրումների կառուցվածքը ներկայացնող գրաֆիկից ակնհայտ է, որ վարկերը մեծամասամբ կենտրոնացված են սպառողական, առևտրի ոլորտներում և արդյունաբերության ճյուղում:


Ըստ տնտեսության ճյուղերի համակարգի վարկավորման՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը նախորդ տարվա համեմատ ավելացել է 0.01-ով և կազմել 0.15, ինչը, սակայն, բավականին ցածր է և վկայում է նվազ կենտրոնացվածության մասին: Նույն ցուցանիշի մեծությունը, ըստ բանկերի միջինի, նախորդ տարվա համեմատ նվազել է 0.02-ով և կազմել 0.26,

[5] *Վարկային ներդրումներում ներառվում են տնտեսության վարկերը, լիզինգը, ֆակտորինգը և բանկերում տեղաբաշխված վարկերն ու ավանդները:*

ինչը վկայում է, որ չնայած տարվա ընթացքում առանձին բանկերում վարկերի ճյուղային կենտրոնացվածությունը որոշակի նվազել է, սակայն մի շարք բանկեր դեռևս վարկավորման ճյուղային կենտրոնացվածության համեմատաբար բարձր մակարդակ ունեն:

Ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի աճի համեմատությամբ սպառողական և առևտրի վարկերի առաջանցիկ աճի տեմպերը հանգեցրել են այդ վարկերի տեսակարար կշռի մեծացման: Նման միտումների պահպանման դեպքում ապագայում կբարձրանա վարկային ներդրումների ճյուղային կենտրոնացվածության մակարդակը:

Գծապատկեր 8. Ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական, 9. Այլ ճյուղեր

Հատկանշական է, որ տնտեսության կայացման և զարգացման պայմաններում այսօր երկարաժամկետ վարկերի պահանջարկը հետզհետե ավելանում է: Հաշվետու տարում վարկային ներդրումներում երկարաժամկետ (1 տարի և ավելի ժամկետայնությամբ) վարկերի տեսակարար կշիռը բավականաչափ աճել է (9.4 տոկոսային կետով) և կազմել 47.4%: Այս երկարաժամկետ վարկերը միջին հաշվով տատանվում են 3 տարի մարման ժամկետայնության շրջանակներում (այնինչ տնտեսությունում ձևավորվել է ավելի երկար ժամկետայնությամբ վարկերի պահանջ): Բանկային համակարգում այսօր նկատվում է «երկար փողերի» սղություն, որը երկարաժամկետ վարկեր տրամադրելու կարևորագույն նախապայմանն է: Երկարաժամկետ միջոցների սղության հիմնական պատճառը «երկար» փող ստեղծող այնպիսի ինստիտուտների բացակայությունն է հանրապետությունում, ինչպիսիք են՝ մասնավոր կենսաթոշակային հիմնադրամները ու

ապահովագրական ընկերությունները, և միայն նման ինստիտուտների ներդրումը կարող է երկարաժամկետ վարկավորման աճի խթան հանդիսանալ:

ՀՀ-ում երկարաժամկետ դրամական միջոցների ձեռքբերման և տնտեսության երկարաժամկետ վարկավորման գործընթացին մեծապես նպաստում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում բանկերի միջնորդությամբ տրամադրվող երկարաժամկետ նպատակային վարկերը: ՀՀ տարածքում գործող 7 բանկեր սպասարկում են Գերմանիա-հայկական հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, «Եվրասիա» հիմնադրամի, ԳԾԾ (Հյուսիս-Արևմտյան գյուղատնտեսական ծառայությունների ծրագիր), Միջազգային ֆինանսական կորպորացիայի, Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության ազգային կենտրոնի, ՄՄԿ (Միջազգային միգրացիայի հիմնադրամ) կողմից իրականացվող վարկային ծրագրերը: Այդ ծրագրերն ընդգրկում են տնտեսության գրեթե բոլոր ոլորտները՝ 31.12.2004թ. դրությամբ ծրագրերի վարկավորման հիմնական ուղղություններ են հանդիսացել առևտուրը՝ ընդհանուր վարկավորման ծավալի 42.0%-ը, գյուղատնտեսությունը՝ 21.1%-ը, սննդի արդյունաբերությունը՝ 8.3%-ը և սպասարկման ոլորտը՝ 8.0%-ը:

Նշված ծրագրերի շրջանակներում բանկերի կողմից տրամադրված վարկերը տարեվերջին կազմել են 21.6 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկերի 15.5%-ը: Այս վարկերի վերադարձելիության աստիճանն անհամեմատ բարձր է, ինչի մասին է վկայում ժամկետանց վարկերի 0.2% կշիռը: Միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի մոտ 61.3%-ը մեկ տարուց ավելի ժամկետով են, 31.5%-ը՝ 6 ամսից մեկ տարի ժամկետով և 7.2%-ը՝ մինչև 6 ամիս ժամկետով:

Վարկային պորտֆելի որակը

Հաշվետու տարում, ինչպես և նախորդ տարի, դարձյալ արձանագրվել է բանկային համակարգի վարկային պորտֆելի որակի բարելավում:

Տարվա ընթացքում չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի (ներառյալ թղթակցային հաշիվները) մեծությունը նվազել է 33.7%-ով և կազմել է 4.2 մլրդ դրամ, իսկ ստանդարտ ակտիվների մեծությունն ավելացել է 28.7%-ով և կազմել է 240.4 մլրդ դրամ: Արդյունքում՝ ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի (ներառյալ թղթակցային հաշիվները) տեսակարար կշիռն աճել է 1.6 տոկոսային կետով և կազմել 98.3%:

Չաշխատող ակտիվների 20.7%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտներին, իսկ 79.3%-ը՝ ռեզիդենտներին: Ռեզիդենտների վարկային ներդրումներում չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է եղել շինարարության և սպառողական վարկերի ոլորտներում՝ համապատասխանաբար 4.3% և 3.7%:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ


Բանկային համակարգի եկամտաբերությունը

Բանկային համակարգի չբաշխված շահույթը կազմել է 17.2 մլրդ դրամ, որից 6.9 մլրդ դրամը բաժին է ընկնում «Հայկապ բանկին» (բանկի շահույթը գրեթե ամբողջապես ձևավորվել է նախորդ ժամանակաշրջանների կորուստների վերադարձի հաշվին):

Տարվա ընթացքում շահույթով աշխատել է 17 բանկ, իսկ վնասով՝ 3 բանկ: Տարին շահույթով եզրափակած բանկերի չբաշխված շահույթը կազմել է 18.1 մլրդ դրամ, վնասով եզրափակած բանկերի ընդհանուր վնասը՝ 930 մլն դրամ:

2004 թվականին բանկային համակարգն ապահովել է շահութաբերության բավականին բարձր մակարդակ. բանկային համակարգի[6] շահութաբերությունն ըստ ակտիվների (չբաշխված շահույթի հարաբերությունն ակտիվների միջին տարեկան մեծությանը) կազմել է 3.2%, իսկ ըստ կապիտալի (չբաշխված շահույթի հարաբերությունը կապիտալի միջին տարեկան մեծությանը)՝ 18.4%: Նույն ցուցանիշները 2003 թվականին համապատասխանաբար կազմել են 2.7% և 14.4%: Բանկային համակարգի զուտ գործառնական մարժան[7] հաշվետու տարում կազմել է 4.5%:

Գծապատկեր 9. Շահութաբերության ցուցանիշները՝ ըստ 16 շահութաբեր բանկերի



Շահութաբեր 16 բանկերի (առանց «Հայկապ բանկի») շահույթի Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.08-ով և կազմել 0.05

---

[6] Առավել իրատեսական և համադրելի պատկերացում կազմելու նպատակով՝ համակարգի շահութաբերությունը ներկայացված է ըստ 19 բանկերի ցուցանիշների (առանց «Հայկապ բանկի»), քանի որ «Հայկապ բանկի» շահույթը ձևավորվել է վերադարձների հաշվին:

[7] Զուտ գործառնական մարժան հավասար է զուտ տոկոսային և զուտ ոչ տոկոսային եկամուտների գումարի և ընդհանուր ակտիվների միջին տարեկան մեծության հարաբերությանը:

միավոր, որը բնութագրում է շահութաբեր բանկերի միջև համակարգի շահույթի կենտրոնացվածության նվազումը:

Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը

2003 թվականի համեմատ բանկային համակարգի[8] շահույթի աճը հիմնականում պայմանավորվել է վարկերի ծավալային և որակական աճի արդյունքում տոկոսային եկամուտների զգալի աճով և զուտ մասհանումների նվազմամբ: 2004թ. առևտրային բանկերը առավելապես ակտիվացրել են իրենց գործունեությունը վարկային շուկայում, որտեղ բավականաչափ մեծացել է նաև միջբանկային մրցակցությունը: Ինչպես արդեն նշվել է, 2004 թվականին վարկերի աճի տեմպը գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, հետևաբար ակտիվների կառուցվածքում մեծացել է նաև վարկերի տեսակարար կշիռը: Միևնույն ժամանակ, էապես բարձրացել է վարկերի կառավարման մակարդակը:

Արդյունքում՝ տնտեսությանը տրամադրված վարկերից բանկային համակարգի ստացած տոկոսային եկամուտները, նախորդ տարվա համեմատ, ավելացել են 28.7%-ով (4.6 մլրդ դրամով), իսկ ակտիվների հնարավոր կորուստներին կատարված զուտ մասհանումները նվազել են 56.9%-ով (1.8 մլրդ դրամով): Վարկերից ստացված տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը տոկոսային եկամուտների կազմում ավելացել է 4.8 տոկոսային կետով և կազմել 76.0%, իսկ պետական արժեթղթերից ստացված եկամուտների տեսակարար կշիռը նվազել է 5 տոկոսային կետով և կազմել 11%: Չնայած տարվա ընթացքում ավելացել են համակարգի կողմից պետական արժեթղթերում կատարված ներդրումների ծավալները, այնուհանդերձ դրանց եկամտաբերության նվազումը հանգեցրել է նախորդ տարվա համեմատ պետական արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտների 17.4%-ով (622 մլն դրամով) նվազման:

Ոչ տոկոսային եկամուտների կազմում այս տարի, 2003 թվականի համեմատ, բավականին մեծ է եղել «Արտարժույթի առք ու վաճառքից ստացված եկամուտներ» հոդվածի ցուցանիշի աճը՝ 47.0% (1.2 մլրդ դրամով): Բանկային համակարգի միջնորդավճարներից ստացված եկամուտները, 2003 թվականի համեմատ, նվազել են 10.6%-ով կամ 906 մլն դրամով (քանի որ հաշվետու տարում «Անելիք» բանկի Մոսկվայի մասնաճյուղը վերակազմավորվել է դուստր ընկերության, և վերջինիս այս հոդվածը հաշվետու տարում ներառված է «Այլ կազմակերպություններում ներդրումներից ստացված եկամուտներ» հոդվածում): Եթե պահպանենք նախորդ տարվա հետ համադրելիությունը և ներառենք նշված բանկի դուստր ընկերության միջնորդավճարները, ապա 2003 թվականի համեմատ, հաշվետու տարում կարձանագրվի համակարգի միջնորդավճարներից եկամուտների 24.9% աճ (2.1 մլրդ դրամով)՝ պայմանավորված փոխանցումների ծավալների զգալի աճով:

---

[8] Առավել իրատեսական և համադրելի պատկերացում կազմելու նպատակով համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը ներկայացված է ըստ 19 բանկերի ցուցանիշների (առանց «Հայկապ բանկի»):

Տոկոսային ծախսերում 58.3% տեսակարար կշիռը բաժին է ընկնում ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսային ծախսերին: Ժամկետային ավանդների դիմաց վճարվելիք տոկոսային ծախսերը, նախորդ տարվա համեմատ, աճել են 6.1%-ով (277 մլն դրամով):


Ոչ տոկոսային ծախսերում 38.8% տեսակարար կշիռ կազմող «Հաշվեգրված աշխատավարձ և դրան հավասարեցված միջոցներ» հոդվածով ծախսերը նախորդ տարվա համեմատ ավելացել են 29.7%-ով (1.7 մլրդ դրամով), իսկ բանկային համակարգի աշխատողների թվաքանակն ավելացել է 8.6%-ով: Նշվածը վկայում է, որ տարվա ընթացքում արձանագրվել է բանկային համակարգի միջին աշխատավարձի բարձրացում:

Ընդհանրացնելով նշենք, որ, նախորդ տարվա համեմատ, 2004 թվականին համախառն եկամուտներն ավելացել են 17.9%-ով (8.7 մլրդ դրամով), իսկ համախառն ծախսերը՝ 9.9%-ով (4.0 մլրդ դրամով):

Համախառն եկամուտների կազմում, նախորդ տարվա համեմատ, տոկոսային եկամուտներն ավելացել են 20.5%-ով, ոչ տոկոսային եկամուտները՝ 17.4%-ով և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձը՝ 14.1%-ով:


Ծախսային մասում, նախորդ տարվա համեմատ, տոկոսային ծախսերը ավելացել են 12.2%-ով, ոչ տոկոսային ծախսերը՝ 18.7%-ով, իսկ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին մասհանումները գրեթե չեն փոփոխվել՝ ավելացել են ընդամենը 0.1%-ով:

Գծապատկեր 10. Բանկային համակարգի ծախսերը և եկամուտները



Եկամուտների և ծախսերի վերոնշված աճի արդյունքում համախառն եկամտի կազմում աճել են տոկոսային եկամտի, իսկ համախառն ծախսերում՝ ոչ տոկոսային ծախսերի տեսակարար կշիռները:

Գծապատկեր 11. Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը



ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու տարվա ընթացքում ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով իրականացվող վճարումների ծավալն ավելացել է 15%-ով և կազմել 3516 մլրդ ՀՀ դրամ:

ՀՀ տարածքում անկանխիկ վճարումները հիմնականում իրականացվել են կրեդիտային վճարային գործիքներով՝ ծավալի 99.5%-ը, քանակի 99.0%-ը (այդ թվում՝ վճարային գործիքների ծավալի 58%-ը և քանակի 66 %-ը կազմել են էլեկտրոնային եղանակով ներկայացված վճարման հանձնարարականները), իսկ դեբետային գործիքներով կատարված վճարումների ծավալը կազմել է ընդհանուր վճարումների 0.5%-ը, իսկ քանակը՝ 1%-ը:

Բանկային համակարգի կողմից տրամադրված քարտերի քանակը 2004 թվականին ավելացել է 78%-ով և կազմել 108.9 հազար: Սպասարկվող քարտերի 43%-ը «ԱրՔա» քարտերն են, 42%-ը՝ «VISA» քարտերը և 15%-ը՝ «MasterCard» և այլ միջազգային քարտերը: 31.12.2004 թ. դրությամբ շրջանառությունում եղել են մոտ 47 հազար՝ «ԱրՔա», 46 հազար՝ «VISA», 3 հազար՝ «MasterCard» և 13 հազար միջազգային այլ քարտեր: ՀՀ տարածքում գործող 15 առևտրային բանկեր իրականացրել են պլաստիկ քարտերի թողարկում և սպասարկում: «ԱրՔա» քարտերը թողարկել և սպասարկել են համակարգի անդամ 13 առևտրային բանկեր: MasterCard միջազգային քարտային վճարումների համակարգին անդամակցել է 6, իսկ VISA համակարգին՝ 8 բանկ: 2004 թվականի ընթացքում ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 98.8 մլրդ դրամի գործառնություն, որը նախորդ տարվա համեմատ 68%-ով ավելի է: Պլաստիկ քարտերով

իրականացվել է 1.76 մլն գործառնություն, որը 76%-ով գերազանցել է նախորդ տարվա գործառնությունների քանակը:

ՀՀ տարածքում գործող բանկերն անդամակցում են WESTERN UNION, MONEY GRAM, ANELIK, UNISTREAM, EXPRESS և այլ համակարգերի: 2004 թվականին այս համակարգերի միջոցով արտասահմանից Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալն ավելացել է 8.5%-ով և կազմել 190 մլրդ դրամ, իսկ Հայաստանի Հանրապետությունից արտասահման փոխանցումների ծավալը՝ 59%-ով և կազմել 29 մլրդ դրամ: Տարվա ընթացքում իրականացված փոխանցումների քանակը կազմել է 763.7 հազար, որից 723.3 հազարը փոխանցումներ են Հայաստանի Հանրապետություն, իսկ 40.3 հազարը՝ Հայաստանի Հանրապետությունից արտասահման: Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետություն դրամական միջոցների և՛ ներհոսքի, և՛ արտահոսքի ծավալներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել UNISTREAM համակարգին (համապատասխանաբար՝ 31.5% և 30.7%), որին զիջում է ANELIK համակարգը (համապատասխանաբար՝ 23.3% և 19.7%), այնինչ 2003 թվականին հակառակ պատկերն էր: Սակայն Հայաստանի Հանրապետություն դրամական միջոցների և՛ ներհոսքի, և՛ արտահոսքի քանակական առումով մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ANELIK համակարգին (համապատասխանաբար՝ 33.0% և 31.8%), որին զիջում է UNISTREAM համակարգը (համապատասխանաբար՝ 22.4% և 25.0%):

Տարեվերջի դրությամբ SWIFT համակարգին անդամակցել են 18 առևտրային բանկեր: Տարվա ընթացքում համակարգի միջոցով արտասահման փոխանցումները ծավալային առումով գերազանցել են նախորդ տարվա մակարդակը 44%-ով, իսկ արտասահմանից Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումները՝ 42%-ով (համապատասխանաբար կազմել են 3092 մլրդ դրամ և 3075 մլրդ դրամ): Առևտրային բանկերի կողմից միջազգային փոխանցումներ են կատարվել նաև FASET-ի, TELEX-ի և FAX-ի միջոցով, որոնց միջոցով արտասահման փոխանցումների ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 46 մլրդ դրամ, իսկ արտասահմանից ստացումների ծավալը՝ շուրջ 53 մլրդ դրամ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Բանկային համակարգում առկա ֆինանսական ռիսկերը ներկայումս կառավարելի շրջանակներում են: ՀՀ բանկային համակարգի ֆինանսական ռիսկերի գնահատումը և վերլուծությունը ցույց է տալիս, որ դեռևս առաջնային կարևորություն ունի վարկային ռիսկը:

Տարվա ընթացքում շարունակվել են վարկային ռիսկի նվազման՝ նախորդ տարիներին դրսևորված միտումները՝ ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ դասակարգված ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 1.6 տոկոսային կետով և կազմել 1.7%: Չաշխատող

ակտիվների մեծությունը կազմել է նորմատիվային ընդհանուր կապիտալի 7.6%-ը: Եթե չաշխատող ակտիվների 4.2 մլրդ դրամ մեծությունից հանենք ակտիվների հնարավոր կորուստների հատուկ պահուստի 1.3 մլրդ դրամ մեծությունը, ապա մնացյալ՝ ծածկույթ չունեցող չաշխատող ակտիվների մեծությունը կկազմի կապիտալի 5.3%-ը: Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշն ունի ընդունելի մակարդակ՝ 31.12.2004 թվականի դրությամբ՝ 14.2% (առավելագույնը՝ 20%), իսկ բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը կազմել է նորմատիվային կապիտալի 1.6%-ը (առավելագույնը՝ 5%): Վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացմանը նպաստում է նաև վարկային ռեգիստրի գործունեությունը, որի միջոցով բանկերը նախապես տեղեկացվում են վարկառուի վարկային պատմությանը:

2004 թվականին բանկային համակարգի զուտ մասհանումների մեծությունը (առանց «Հայկապ բանկի») 56.9%-ով զիջել է նախորդ տարվա մեծությանը՝ կազմելով 1.4 մլրդ դրամ:

Արտարժութային ռիսկի տեսանկյունից հատկանշական է, որ հաշվետու տարում դրսևորվել են ՀՀ դրամի՝ այլ արժույթների նկատմամբ փոխարժեքի բավականին մեծ տատանումներ: 2004 թվականին արձանագրվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին տարեկան 7.8% արժեքավորում, իսկ 31.12.2004թ. դրությամբ, 2003 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 14.2% արժեքավորում:

2004 թվականին ՀՀ դրամի՝ այլ արժույթների նկատմամբ փոխարժեքի տատանումների հետևանքով բանկերի ընդհանուր վնասը կազմել է 428 մլն դրամ՝ բանկային համակարգի նորմատիվային կապիտալի 0.7%-ը: Արտարժույթի վերագնահատման արդյունքում վնասներ է ունեցել 16 բանկ, իսկ եկամուտ՝ 4 բանկ: 2004 թվականին բանկային համակարգն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների արդյունքում ապահովել է 3.7 մլրդ դրամ եկամուտ: 2004 թ. վերջի դրությամբ բանկային համակարգի համախառն արտարժութային դիրքը կազմել է 7.3%, իսկ երկրորդ խմբի բաց դիրքը՝ 1.2%՝ համապատասխանաբար պահանջվող առավելագույնը 25% և 5% նորմատիվային մակարդակների դեպքում:

Արտարժույթի ռիսկի գնահատման VAR (Value at risk) մեթոդաբանությամբ կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ 2005 թվականին դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգի արտարժույթի վերագնահատման արդյունքում հնարավոր վնասները 95% հավանականությամբ չեն կարող գերազանցել 385 մլն դրամի սահմանաչափը: Նշված գնահատման շեղման մեծությունը փաստացի մակարդակից կախված է 2005 թվականի ընթացքում արտարժութային բաց դիրքերի փոփոխությունների աստիճանից, քանի որ հաշվարկների հիմքում ընկած են 31.12.2004 թվականի դրությամբ բանկերի կողմից ներկայացված արտարժութային բաց դիրքերը: Արտարժութային ռիսկի զսպման նկատառումով 2005 թվականին նորմատիվային դաշտում նախատեսվում է խստացում. 2005 թվականի ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը բանկի առաջին արտարժութային խմբի համախառն դիրքի և ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը չի կարող գերազանցել ընդհանուր կապիտալի 20%-ը, իսկ 2005 թվականի հոկտեմբերի 1-ից՝ 15%-ը: Միևնույն ժամանակ, 2005 թվականի ապրիլի 1-ից մինչև

հոկտեմբերի 1-ը ըստ առանձին արժույթների բաց դիրքը չի կարող գերազանցել ընդհանուր կապիտալի 15%-ը, իսկ 2005 թվականի հոկտեմբերի 1-ից՝ 10%-ը:

Բանկային համակարգի իրացվելիության ռիսկը ցածր է, քանի որ բանկային համակարգը բարձր իրացվելի ակտիվների զգալի ծավալ ունի՝ 158.2 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր ակտիվների 44%-ը: 2004 թվականին բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության ցուցանիշը նվազելով 1.0 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմել է 47.1%: Ցպահանջ պարտավորությունների աճի պարագայում ընթացիկ իրացվելիության ցուցանիշը նվազելով 2.8 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմել է 98.7%: Ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշները նորմատիվային պահանջվող մակարդակից բավականին բարձր են և իրացվելիության հիմնախնդրի առաջացման վտանգ չեն ներկայացնում:

Գնային ռիսկի տեսանկյունից հատկանշական է, որ հիմնական միջոցների գների խելամիտ տատանման հետևանքով բանկային համակարգը վերագնահատման արդյունքում խոշոր վնասներ չի կրի: Հիմնական միջոցների շուկայական գների, օրինակ՝ 10%-ով նվազման և/կամ աճի դեպքում համակարգի կորուստը և/կամ օգուտը կկազմի ընդհանուր կապիտալի 3.4%-ը: Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի հիմնական միջոցների մեծությունը կազմել է մոտ 22 մլրդ դրամ, իսկ սեփականություն հանդիսացող բռնագանձված անշարժ գույքի մեծությունը՝ 0.7 մլրդ դրամ: Ոչ պետական ռիսկային արժեթղթերում կատարված ներդրումների ծավալը տարեվերջին կազմել է մոտ 4 մլրդ դրամ, որի գների, օրինակ՝ 10%-ով նվազման և/կամ աճի դեպքում համակարգի կորուստը և/կամ օգուտը կկազմի ընդհանուր կապիտալի 0.6%-ը:

Տոկոսադրույքի ռիսկի տեսանկյունից հատկանշական է, որ առևտրային բանկերը մեծ ռիսկեր չունեն այդ ոլորտում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունը երկար չէ, որը տոկոսադրույքները հաճախակի վերանայելու հնարավորություն է ստեղծում՝ հետևելով շուկայական փոփոխություններին: Միևնույն ժամանակ, տոկոսադրույքի ռիսկի գնահատման դյուրացիայի մեթոդիկայով կատարված գնահատումները ցույց են տալիս, որ ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնությունների ճեղքվածքը փոքր մեծություն է. դրական մեծություն (մոտ 1 տարի), ինչը վկայում է, որ շուկայական տոկոսադրույքների համամասնորեն տատանումները զգալի ազդեցություն չեն թողնի բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքի վրա: Հաշվարկները վկայում են, որ ընդհանուր շուկայական տոկոսադրույքների (ակտիվների և պարտավորությունների) 2%-ով նվազման դեպքում բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքը կավելանա 452 մլն դրամով:

Բանկային համակարգի 2004 թվականի զուտ տոկոսային եկամուտները գերազանցել են նախորդ տարվա նույն մեծությունը 24.5%-ով՝ հիմնականում պայմանավորված ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունների և բարձր եկամտաբեր սպառողական ու առևտրի վարկերի աճով: Սակայն հարկ է նշել, որ բանկային համակարգի եկամուտների հիմնական աղբյուր են հանդիսանում տոկոսային եկամուտները, և տոկոսային մարժայի նվազման սցենարի դեպքում, այլ հավասար պայմաններում, ակնկալվում է բանկային համակարգի զուտ տոկոսային եկամուտների

նվազում (միևնույն ժամանակ հաշվի առնելով ցպահանջ պարտավորությունների՝ վերջին տարիներին ձևավորված արագատեմպ աճի միտումները՝ կարելի է ենթադրել, որ նույնիսկ այս սցենարի դեպքում տոկոսային ռիսկը բավականին ցածր է):

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2004 թվականի ընթացքում վարկային կազմակերպության լիցենզիա են ստացել «Առաջին հիփոթեքային կազմակերպություն» ՍՊԸ-ն, «Իզմիրլյան Եվրասիա» ՍՊԸ-ն և «Կասկադ-Կրեդիտ» ՓԲԸ-ն: Տարեվերջին ՀՀ տարածքում գործել են ինը վարկային կազմակերպություններ (երկու մասնաճյուղերով), որոնցից երկուսը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն և վեցը՝ ունիվերսալ վարկային կազմակերպություններ:

Ներկայումս տնտեսությունում արագատեմպ զարգացման միտումներ են դրսևորում վարկային կազմակերպությունները՝ ակտիվ գործունեություն իրականացնելով վարկային և լիզինգային շուկաներում: Ընդհանուր առմամբ, վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի միջին շուկայական տոկոսադրույքները գերազանցում են բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի միջին շուկայական տոկոսադրույքները, սակայն, որպես կանոն, բնակչության լայն խավի համար վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող վարկային ծառայությունները համարվում են ավելի մատչելի:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 47.6%-ով՝ հիմնականում ի հաշիվ տարվա ընթացքում բացված երեք վարկային կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամի: Տարեվերջին կապիտալը կազմել է 3.3 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 5.0%-ը:

Պարտավորություններն ավելացել են 78.7%-ով և կազմել 2.4 մլրդ դրամ կամ բանկային համակարգի պարտավորությունների 0.8%-ը: Իրավաբանական անձանցից և ֆիզիկական անձ մասնակիցներից փոխառությունները տարեվերջին կազմել են 1.3 մլրդ դրամ: Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ձեռք բերած միջոցների մեծությունը տարեվերջին կազմել է 789 մլն դրամ:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը տարվա ընթացքում աճել է 59.3%-ով (2.1 մլրդ դրամով) և 31.12.2004թ. դրությամբ կազմել 5.6 մլրդ դրամ կամ բանկային համակարգի ակտիվների 1.5%-ը: Ակտիվներում նշանակալի աճել են վարկային ներդրումները (ներառյալ լիզինգը) և բանկերի նկատմամբ պահանջները: Վարկային ներդրումներն ավելացել են 32.7%-ով և կազմել 3.2 մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների տեղաբաշխած վարկերի և լիզինգի ընդհանուր ծավալի 31%-ը տրամադրվել է սպառողական ոլորտին, 27%-ը՝ արդյունաբերությանը, 11%-ը՝ գյուղատնտեսությանը:

2004 թվականին վարկային կազմակերպությունների չբաշխված շահույթը կազմել է 155 մլն դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 3.9%, իսկ ըստ կապիտալի՝ 6.3%:

ԲԱՆԿԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

2004 թվականին ԿԲ կողմից կատարվել է Հայաստանում բանկային վերահսկողության Բազելյան հիմնարար սկզբունքներին համապատասխանելիության գնահատում: Ուսումնասիրության շրջանակներում ներառվել են ՀՀ բանկային օրենսդրությունը, ՀՀ ԿԲ իրավական ակտերը և խորհրդատվական նյութերը, ինչպես նաև ներկայումս ՀՀ ԿԲ կողմից իրականացվող բանկային վերահսկողության և լիզենզավորման գործընթացները:

Աշխատանքները ցույց են տվել, որ ՀՀ բանկային վերահսկողության դաշտը մեծամասամբ համապատասխանում է Բազելյան հիմնարար սկզբունքներին, սակայն արձանագրվել են նաև անհապատասխանության մի քանի դեպքեր, որոնց շտկման նպատակով ՀՀ ԿԲ-ն ակտիվ գործողություններ է իրականացնելու մոտ ապագայում: Խնդիրների առաջին խումբը վերաբերում է համախմբված վերահսկողությանը և վերահսկող մարմինների համագործակցությանը, իսկ երկրորդ խումբը՝ բանկերում կորպորատիվ կառավարման սկզբունքների ձևավորմանը:

Համախմբված վերահսկողությունը և վերահսկող մարմինների համագործակցությունը

Բազելյան սկզբունքների համաձայն՝ վերահսկող մարմինը պետք է հնարավորություն ունենա ուղղակի կամ անուղղակի վերահսկողություն իրականացնելու բանկի հետ փոխկապակցված և բանկի դուստր կազմակերպությունների նկատմամբ: Ներկայումս Կենտրոնական բանկը իրավասու է վերահսկողություն իրականացնել միայն դուստր հանդիսացող կազմակերպությունների նկատմամբ: Այս առումով նախատեսվում են համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որպեսզի վերահսկողությունը ներառի նաև փոխկապակցված անձանց, բացահայտի բանկի «իրական» սեփականատերերին:

Միասնական վերահսկողական համակարգի ձևավորումը

Ելնելով համախմբված վերահսկողության իրականացման ու վերահսկող մարմինների համագործակցության խնդիրների լուծման անհրաժեշտությունից, հատկապես ֆինանսական շուկայում առկա ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման և այդ ռիսկերի նվազեցման կարևորությունից, ներկայումս ՀՀ-ում հասունացել է միասնական վերահսկողության ստեղծման անհրաժեշտությունը: Առաջիկա երկու տարիների ընթացքում միասնական վերահսկողական համակարգի ստեղծումը կարևորագույն առաջնայնություններից մեկն է: Միասնական վերահսկողական համակարգը ենթադրում է ֆինանսական շուկայի տարբեր հատվածների՝ բանկային, ապահովագրական, արժեթղթերի շրջանառության, վերահսկողների միավորում մեկ կառուցվածքի ներքո:

Ֆինանսական շուկայի առանձին մասնակիցների ռիսկերը մեծ ազդեցություն են թողնում նաև շուկայի այլ մասնակիցների գործունեության վրա: Նման իրավիճակում առանձնակի կարևորություն են ստանում ֆինանսական շուկայի բոլոր մասնակիցների նկատմամբ մեկը մյուսից բխող պահանջների սահմանումը, վերահսկողության մարմնի համար շուկայում առկա բոլոր ռիսկերի տեսանելիությունը, ֆինանսական շուկայի մասնակիցների հորիզոնական հավասարաչափ զարգացումը, որոնք, թերևս, ֆինանսական վերահսկողության ներկա կառուցվածքը չի ապահովում:

ՀՀ-ում միավորված վերահսկողություն ներդնելու անհրաժեշտությունը բխում է ֆինանսական շուկայի արդյունավետ վերահսկողության միջազգային լավագույն փորձից և պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամանակահատվածում: Միասնական վերահսկողական մարմնի ստեղծումը հնարավորություն կտա նաև նվազեցնելու ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների վարչարարական ծախսերը, բարձրացնելու այդ ուղղությամբ կատարվող ծախսերի արդյունավետությունը:

Կորպորատիվ կառավարման սկզբունքների ճնավորումը

Ներկայումս ՀՀ տարածքում գործող գրեթե բոլոր բանկերում չեն կիրառվում կորպորատիվ կառավարման՝ միջազգայնորեն ընդունված սկզբունքները: Այս փաստը հղի է լուրջ ռիսկերով, քանի որ գործող կառավարման պրակտիկան և ճնավորված սովորույթները չեն ապահովում բանկի թափանցիկությունը, չեն պաշտպանում մանր սեփականատերերի և մյուս ներդրողների շահերը, չեն աշխատում բանկի բոլոր վերահսկիչ մեխանիզմները: Բանկային վերահսկողության զարգացման համատեքստում կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրումը ռազմավարական խնդիր է: Բանկերում կառավարման արդյունավետության բարձրացման համար ՀՀ ԿԲ կողմից մշակվել է կորպորատիվ կառավարման հայեցակարգ, որի ուղղությամբ կատարվող աշխատանքները սկսվել են 2003 թվականին: Հայեցակարգում հստակ ներկայացվել են բանկերում կորպորատիվ կառավարման դիրքորոշումները: Դրանք քննարկվել են ինչպես առևտրային բանկերի ղեկավարների, Բանկերի միության, այնպես էլ միջազգային փորձագետների հետ: Վերջնական քննարկումներից հետո կորպորատիվ կառավարման հայեցակարգի հիմնարար դրույթներին համապատասխան օրենսդրական փոփոխություններ կիրականացվեն բանկային գործունեությունը կարգավորող օրենքներում:

2005 թվականի փետրվար-մարտ ամիսներին Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի ֆինանսական համակարգի գնահատման ծրագրի (FSAP) առաքելությունը վերանայել է 2000 թվականի ՀՀ ֆինանսական համակարգի կայունության գնահատումը (FSSA): FSAP առաքելությունը դրական է գնահատել բանկային համակարգի զարգացումները երկու առաքելությունների միջև ընկած ժամանակահատվածում: Ըստ առաքելության գնահատումների՝ ապահովագրական համակարգը շատ թույլ է զարգացած, և այս ոլորտի վերահսկողության զարգացման կարիք կա:

Էական առաջընթաց է նկատվում ֆինանսական համակարգի բարեփոխումների ոլորտում՝ բանկային օրենսդրությունների վերանայում, վարկային ռեգիստրի, ավանդների ապահովագրման համակարգերի ներդրում և այլն:

2001 - 2002 թվականներին որոշ բանկերի լուծարումներից հետո բանկային համակարգի նկատմամբ վստահությունը վերականգնվել է, բանկային համակարգն արագորեն զարգանում է: Ֆինանսական կայունության ցուցանիշները (FSI) վկայում են բանկային համակարգի կապիտալի բավարար համարժեքության, իրացվելիության և եկամտաբերության մասին: Ըստ գնահատումների՝ տնտեսության արագ զարգացման պարագայում բանկային համակարգը դեռևս այդ զարգացմանը նպաստող առանցքային օղակը չէ, քանզի ցածր է ֆինանսական միջնորդության մակարդակը:

Վերջին 2 -3 տարիների ընթացքում վարկային ներդրումների արագատեմպ աճը չնայած ցանկալի է ֆինանսական միջնորդության ընդլայնման տեսանկյունից, այնուամենայնիվ մանրակրկիտ մոնիտորինգի կարիք ունի՝ վարկային ռիսկի հնարավոր կորուստներից խուսափելու համար: Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել բանկերում ռիսկերի գնահատման համարժեք համակարգերի ներդրմանը, հատկապես այն պարագայում, երբ կորպորատիվ կառավարման սկզբունքները դեռևս չեն գործում:

FSAP առաքելության կողմից կատարված առաջարկությունները հիմնականում վերաբերում են հետևյալ ոլորտներին.

- *ռիսկերի մակրոպրուդենցիալ վերլուծության իրականացում և ֆինանսական կայունության նպատակների ամրագրում,*
- *կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրում օրենսդրական փոփոխությունների միջոցով,*
- *համախմբված վերահսկողության ու վերահսկող մարմինների միջև համագործակցության ձևավորում,*
- *վերահսկողների իրավունքների պաշտպանվածության բարձրացում,*
- *ռիսկերի վրա հիմնված վերահսկողության ներդրման հետագա զարգացում,*
- *վարկատուների իրավունքների պաշտպանվածության բարձրացում:*

Կապիտալի նոր համաձայնագրի՝ Բազել - 2-ի ներդրումը

Կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրման նպատակներից մեկը բանկերում ռիսկերի կառավարման նոր մոտեցումների ձևավորումն է: Այսօր ամենաարդիական խնդիրը ամբողջ աշխարհի վերահսկողների և ֆինանսական կազմակերպությունների համար Բազելյան նոր համաձայնագրի ներդրումն է (Բազել - 2), որի կիրառումը միաձգամայն նոր հորիզոններ է բացում բանկերի ֆինանսական ռիսկերի կառավարման և վերահսկողության կատարելագործման համար: Բազել-2 համաձայնագիրը բանկի ռիսկայնության գնահատման բավականին ճկուն համակարգ է առաջարկում և զգալիորեն նպաստում է բանկի ներսում ռիսկերի կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Արդեն 90-ական թվականների վերջին Բազել-1-ը (1988 թվականի Բազելյան համաձայնագիրը) իր տասնամյա գործողության ընթացքում կորցրել էր արդյունավետությունը: Առաջին հերթին դա պայ-

մանավորված էր ֆինանսական հուկաների և գործիքների զարգացմամբ, որի պարագայում կապիտալի հուկայի նոր գործիքների միջոցով (օրինակ՝ արժեթղթավորման գործառնություններ) հնարավոր է հեշտությամբ ռիսկը փոխանցել՝ խուսափելով կապիտալի իրական պահանջներից: Ռիսկերի կառավարման համակարգերի զարգացմանը զուգահեռ կատարված ուսումնասիրությունները բացահայտում էին, որ որոշ ակտիվների գծով կապիտալի պահանջը երբեմն գերազանցում էր այդ ռիսկի «ապահովագրման» համար անհրաժեշտ տնտեսական կապիտալը կամ ընդհակառակը՝ թերագնահատում էր այն: Արդեն 1998 թվականին Բազելյան կոմիտեում ակտիվ քննարկումներ սկսվեցին կապիտալի նոր համաձայնագրի՝ Բազել - 2-ի մշակման ուղղությամբ: Բազել - 2 համաձայնագիրը սոսկ կապիտալի պահանջի սահմանումը չի ներառում, այնտեղ մեծ ուշադրություն է դարձվում կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ստանդարտներին, որոնք կիրառելի կարող են լինել ոչ միայն G-10 երկրներում:

Նոր Բազելյան համաձայնագիրը բաղկացած է երեք ծավալուն մասերից.

1. Կապիտալի նվազագույն պահանջներ,

2. Վերահսկողական գործընթացներ,

3. Շուկայական կարգապահություն:

Կապիտալի նվազագույն պահանջներ մասը ներառում է դրույթներ, համաձայն որոնց՝ բանկերի կապիտալի համարժեքության հաշվարկներում պետք է ներառվեն ոչ միայն վարկային, այլև գործառնական և շուկայական ռիսկերի գծով կապիտալի նվազագույն պահանջների հաշվարկի մեթոդները: Իսկ վարկային ռիսկի գծով կապիտալի պահանջների հաշվարկի համար ներկայիս ռիսկերի կշիռների ստանդարտ աղյուսակը փոխարինվելու է բանկերի կողմից հաշվարկված մեծություններով: Այսինքն՝ յուրաքանչյուր բանկ պետք է կարողանա պատմական շարքերի ու մոդելների հիման վրա ինքնուրույն հաշվարկել իր կապիտալի համարժեքության նվազագույն չափը:

Այսուհետ բանկը ինքն է գնահատելու իր հաճախորդի վարկանիշը և ինքն է սահմանելու վարկանիշին համապատասխան ռիսկի կշիռները: Վերահսկող մարմինը միայն հաստատելու է բանկի կողմից կիրառվելիք վարկանշման համակարգերը կամ մեթոդը: Վերահսկողական այս նոր գործընթացները պահանջելու են Կենտրոնական բանկի կարողությունների կտրուկ ընդլայնում: Միաժամանակ, համաձայնագիրը էլ ավելի մեծ ուշադրություն է դարձնում բանկերի թափանցիկության խնդրին:

Ըստ էության, բանկերի վերահսկողության առումով փոխվում են մի շարք շեշտադրումներ: Առաջինը՝ բանկերը կարող են ավելի լավ կառավարել ռիսկերը, քան վերահսկողները: Երկրորդը՝ հուկան և հուկայական կարգապահությունը ավելի մեծ կշիռ են ձեռք բերում բանկերի կարգավորման ու վերահսկողության ոլորտներում:

Բանկային վերահսկողության զարգացման նպատակով ՀՀ ԿԲ կողմից իրականացվող միջոցառումների հիմքում Բազել - 2-ի հիմնարար մոտեցումներն են: Ռիսկերի կառավարման ոլորտում ՀՀ ԿԲ կողմից արդեն իսկ մշակվել են տարբեր ֆինանսական ռիսկերի գնահատման մեթոդաբանություններ, որոնք ներկայումս օգտագործվում են հեռակա վերահսկողության գործընթացում և մոտ ապագայում նախատեսվում է այդ մեթոդաբանությունները փոխանցել

առևտրային բանկերին և կազմակերպել սեմինարներ՝ առևտրային բանկերում դրանք կիրառելու նպատակով:

Ֆինանսական կայունության համակարգ

ՀՀ ԿԲ ռազմավարական խնդիրներից է լինելու ֆինանսական կայունության համակարգի ձևավորումը: Ընդ որում, խոսքն այնպիսի համակարգի ձևավորման մասին է, որը դուրս է գալիս սոսկ վերահսկողական խնդիրների դաշտից, բայց էական դեր ունի կայուն զարգացող ֆինանսական համակարգ ունենալու համար:

Վերջին տարիներին ֆինանսական գործիքների և շուկաների զարգացումները ու ինտեգրումը, ինչպես նաև տարբեր երկրների ֆինանսական ճգնաժամերը գրեթե բոլոր երկրների համար դրդապատճառ են հանդիսացել, որ իշխանությունները, բացի ֆինանսական համակարգի առանձին բաղկացուցիչների զարգացումների ուսումնասիրությունից, քաղաքականություն մշակելիս ուշադրություն դարձնեն նաև երկրի ֆինանսական համակարգի՝ որպես մեկ ամբողջության կայունությանը: Ֆինանսական ծառայությունների ցանցը թափանցել է ամենուր, և ֆինանսական անկայունության հետևանքները կարող են վնասել յուրաքանչյուրին, երբեմն նույնիսկ կաթվածահար անել երկրի տնտեսական համակարգը: Ավելին, գլոբալացման ներկա պայմաններում մեկ երկրի կողմից վարվող հավասարակշռված ֆինանսական քաղաքականությունը կարող է ի զորու չլինել պայքարելու գործընկեր երկրներից անսպասելիորեն ներթափանցած ֆինանսական անհավասարակշռությունների դեմ:

Նման խնդիրներից անմասն չի մնում նաև Հայաստանը: Տնտեսության արագ զարգացման, մասնավոր տրանսֆերտների անկանխատեսելի ներհոսքի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում հաշվի առնել նաև արտաքին աշխարհում տեղի ունեցող տնտեսական գործընթացները:

ՀՀ տնտեսության ֆինանսական կայունության բնութագրման, ինչպես նաև ֆինանսական կայունության տարրերի բացահայտման և շարունակական մոնիտորինգի ապահովման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2004 թվականին մշակվել է «Ֆինանսական համակարգի կայունության ապահովման կառուցվածքի հայեցակարգ»: ՀՀ կենտրոնական բանկը, որպես ռազմավարական ուղղություն, նպատակադրել է ֆինանսական կայունության ապահովումը և այդ համակարգի կայացման համար առաջիկա տարիներին ծավալուն աշխատանքներ է իրականացնելու:

ՀՀ կենտրոնական բանկը ֆինանսական կայունության ապահովման նպատակով մշակելու և շարունակապես բարելավելու է մեխանիզմների մի ամբողջություն կամ, այլ կերպ ասած՝ ֆինանսական կայունության ապահովման արդյունավետ կառուցվածք, որի կառուցման և իրագործման համար առաջնային են ֆինանսական համակարգի հնարավոր ռիսկերի և ռիսկերից խոցելիության աստիճանի բացահայտումը, այդ ռիսկերի վերլուծությունը և գնահատումը: Ֆինանսական կայունության ապահովումը ենթադրում է ռիսկերի մակրոպրուդենցիալ

վերլուծություն տնտեսության տարբեր հատվածների միջև (ֆինանսական, իրական, արտաքին), կապերի և ռիսկային ոլորտների բացահայտում, ռիսկերի գնահատում ու համարժեք կառավարում:

Հավելված 1

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, դրանց մասնաճյուղերը

Առևտրային բանկեր		Մասնաճյուղեր	
		31.12.2003	31.12.2004
1	Հայխնայբանկ	101	101
2	Արդշինինվեստբանկ	61	49
3	Հայէկոնոմբանկ	24	27
4	«Արցախ» բանկ	11	11
5	«Կոնվերս» բանկ	8	13
6	Հայգյուղփոխբանկ	8	10
7	Յունիբանկ	5	6
8	«Անելիք» բանկ	5	6
9	«Առէկսիմբանկ»	4	4
10	«Ինեկո» բանկ	2	2
11	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»	1	1
12	«Պրոմեթեյ» բանկ	1	1
13	Հայներարտբանկ	-	
14	Զարգացման հայկական բանկ	-	
15	Հայինվեստբանկ	-	
16	«Մելլաթ» բանկ	-	
17	Էմպորիկի բանկ -Հայաստան	-	
18	«ԻԹԲ» միջազգային առևտրային բանկ	-	
19	Միջինվեստբանկ	-	1
20	Հայկապ բանկ	1	1
Ընդամենը		**232**	**233**

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշներ

հազար դրամ

			31.12.02	31.12.03	Փոփոխությունը 31.12.03-31.12.02	31.03.04	Փոփոխությունը 31.03.04-31.12.03	30.06.04	Փոփոխությունը 30.06.04-31.03.04
			1	2	3	4	5	6	7
Ակտիվներ	Կանխիկ դրամական միջոցներ	Դ	3606798	4826950	33.8%	4782057	-0.9%	4769502	-0.3%
		Ա	10491205	12551870	19.6%	14371238	14.5%	14488390	0.8%
	Թղթակցային հաշվի և պարտադիր պահուստների մնացորդներ	Դ	19168368	20734143	8.2%	18235146	-12.1%	18555791	1.8%
		Ա	41142638	62396975	51.7%	58720735	-5.9%	63091023	7.4%
	Պետական արժեթղթեր		31232848	31311092	0.3%	33766807	7.8%	36336093	7.6%
	Պարտավորություններ ռեպո համաձ. ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոպով ձեռք բերված արտարժույթի գծով	Դ	-4439701	-2491066	-43.9%	-3521000	41.3%	0	-100.0%
		Ա		0	-	-766571	-	-5727062	647.1%
	Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ			-	288000	-	0	-100.0%
		Ա			-	0	-	0	-
	ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված ավանդներ	Դ	0	100000	-	4474270	4374.3%	2590512	-42.1%
		Ա			-	0	-	267245	-
	Բանկերում տեղաբաշխված ավանդներ	Դ	68093	652247	857.9%	1014215	55.5%	1509313	48.8%
		Ա	19691399	22950759	16.6%	25259881	10.1%	20033891	-20.7%
	Վարկեր տնտեսությանը	Դ	19057449	32482437	70.4%	31775770	-2.2%	36841931	15.9%
		Ա	65428081	66257317	1.3%	75325008	13.7%	82467663	9.5%
	Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ	405821	1375962	239.1%	1295177	-5.9%	1506867	16.3%
		Ա	4093297	2360374	-42.3%	2076315	-12.0%	1807299	-13.0%
	Պահուստաֆոնդ		-3936700	-2996054	-23.9%	-3390997	13.2%	-2885855	-14.9%
	Այլ ակտիվներ		13420131	7651633	-43.0%	7066628	-7.6%	8346244	18.1%
	Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	Դ	548761	785522	43.1%	885622	12.7%	942878	6.5%
		Ա	1938581	800162	-58.7%	990489	23.8%	1033602	4.4%
	Հիմնական միջոցներ		15267624	15818497	3.6%	16657160	5.3%	17516287	5.2%
	Այլ արժեթղթեր		4355297	461429	-89.4%	18143840	3832.1%	3379439	-81.4%
	Լիզինգ, ֆակտորինգ		1628693	4119383	152.9%	4231278	2.7%	4100897	-3.1%
	Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		243168682	282149632	16.0%	311681068	10.5%	310971950	-0.2%

				1	2	3	4	5	6	7
Պարտավորություններ	Բանկերի թղթակցային հաշիվներ		Դ.	667542	382245	-42.7%	811790	112.4%	561914	-30.8%
			Ա	3599771	2600224	-27.8%	3146675	21.0%	4848988	54.1%
	Ցպահանջ պարտավորություններ		Դ.	27921581	31940690	14.4%	27712320	-13.2%	29158684	5.2%
			Ա	56591321	78466297	38.7%	83843591	6.9%	85075071	1.5%
	Պարտավորություններ բանկերի նկատմամբ		Դ.	8105000	9050000	11.7%	9650060	6.6%	12647000	31.1%
			Ա	12602500	7288727	-42.2%	24330014	233.8%	11269168	-53.7%
	Ֆիզիկական անձանց ավանդներ		Դ.	3757978	4137482	10.1%	4509844	9.0%	4579926	1.6%
			Ա	39458301	45550489	15.4%	47649709	4.6%	46398578	-2.6%
	Իրավաբանական անձանց ավանդներ		Դ.	6618260	9860212	49.0%	9860212	0.0%	9273167	-6.0%
			Ա	20547238	19739552	-3.9%	19739552	0.0%	22051344	11.7%
	Այլ պարտավորություններ			23318357	23553066	1.0%	26471243	12.4%	28101729	6.2%
	Հաշվարկված վճարվելիք տոկոսներ		Դ.	399006	371293	-6.9%	381887	2.9%	398142	4.3%
			Ա	1045613	771364	-26.2%	862107	11.8%	867750	0.7%
	Ընդհանուր պարտավորություններ			204632468	232036320	13.4%	258969004	11.6%	255231461	-1.4%
Կապիտալ	Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ			34736349	36769005	5.9%	37050340	0.8%	37925091	2.4%
	Գլխավոր պահուստ			4119766	4242383	3.0%	4243145	0.0%	5121041	20.7%
	Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր			-341562	0	-100.0%	0	-	0	-
	Չբաշխված շահույթ (վնաս)	Ընթացիկ ժամ-շրջանի		-1877830	6480851	-445.1%	3705382	-42.8%	4320180	16,6%
		Նախորդ ժամ-շրջանի		-673598	614693	-191.3%	4948017	705.0%	4785896	-3,3%
	Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ			38536214	50113313	30.0%	52712064	5.2%	55740489	5.7%
Ծանուցում	Ստացված գրավ			193418611	236507065	22.3%	240530783	1.7%	266056452	10.6%
	այդ թվում՝ պետ.արժեթղթեր			5994284	5598668	-6.6%	4900617	-12.5%	5599667	14.3%
	Ստացված երաշխավորություն					-	31900992	-	36191820	13.5%
	Հաշվեկշռից դուրս գրված	վարկեր		18332634	9917368	-45.9%	9779470	-1.4%	10098456	3,3%
		դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ		6348902	3712817	-41.5%	3646376	-1.8%	3590570	-1,5%
		տոկոսներ		20779121	5363307	-74.2%	5061682	-5.6%	4962317	-2,0%
	Տրամադրված երաշխավորություններ			6039997	4987041	-17.4%	4632028	-7.1%	5352760	15.6%
	Տրամադրված գրավներ	ընդամենը		2726509	835540	-69.4%	362000	-56.7%	1380447	281,3%
		այդ թվում՝ պետական արժեթղթեր		1126489	835540	-25.8%	362000	-56.7%	1308901	261,6%
	Ծանուցում. Ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերի քանակը			20	19		19		19	

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշներ

(շարունակություն)

			30.09.04	Փոփոխությունը 30.09.04-30.06.04	31.12.04	Փոփոխությունը 31.12.04-30.09.04	2004թ.ապրն-կաճ*	Փոփոխությունը 31.12.04-31.12.03	
			8	9	10	11	12	13	
Ակտիվներ	Կանխիկ դրամական միջոցներ	Դ	5800885	21.6%	6964968	20.1%	6964968	2138018	44.3%
		Ա	22005194	51.9%	17745627	-19.4%	17745627	5193757	41.4%
	Թղթակցային հաշվի և պարտադիր պահուստների մնացորդներ	Դ	21182250	14.2%	25378491	19.8%	25378491	4644348	22.4%
		Ա	75063615	19.0%	87855477	17.0%	87855459	25458502	40.8%
	Պետական արժեթղթեր		36296092	-0.1%	36596314	0.8%	36596314	5285222	16.9%
	Պարտավորություններ ռեպո համաձ. ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոպով ձեռք բերված արտարժույթի գծով	Դ	-4934500	-	-3935425	-20.2%	-3935425	-1444359	58.0%
		Ա	-562333	-90.2%	-301561	-46.4%	-301561	-301561	-
	Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ	400000	-	20000	-95.0%	20000	20000	-
		Ա	0	-	0	-	0	0	-
	ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված ավանդներ	Դ	0	-100.0%	2583338	-	2583338	2483338	2483.3%
		Ա	0	-100.0%	0	-	0	0	-
	Բանկերում տեղաբաշխված ավանդներ	Դ	2635244	74.6%	2464560	-6.5%	2464560	1812313	277.9%
		Ա	19726159	-1.5%	11614200	-41.1%	11614200	-11336559	-49.4%
	Վարկեր տնտեսությանը	Դ	38952750	5.7%	40510627	4.0%	40510627	8028190	24.7%
		Ա	90655250	9.9%	94956687	4.7%	94958201	28699370	43.3%
	Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ	2009938	33.4%	1468646	-26.9%	1468646	92684	6.7%
		Ա	1617435	-10.5%	2227656	37.7%	2227656	-132718	-5.6%
	Պահուստաֆոնդ		-3825223	32.6%	-3802564	-0.6%	-3805466	-806510	26.9%
	Այլ ակտիվներ		8671960	3.9%	8488322	-2.1%	8430001	836689	10.9%
	Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	Դ	962593	2.1%	1039638	8.0%	1039718	254116	32.3%
		Ա	1099176	6.3%	1075739	-2.1%	1072627	275577	34.4%
	Հիմնական միջոցներ		18293548	4.4%	21955412	20.0%	21955413	6136915	38.8%
	Այլ արժեթղթեր		602212	-82.2%	3962181	557.9%	3962181	3500752	758.7%
	Լիզինգ, ֆակտորինգ		4079193	-0.5%	4761969	16.7%	4761969	642586	15.6%
	Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		340731438	9.6%	363630302	6.7%	363567544	81480670	28.9%

				8	9	10	11	12	13	
Պարտավորություններ	Բանկերի թղթակցային հաշիվներ		Դ	260221	-53.7%	286086	9.9%	286086	-96159	-25.2%
			Ա	6201054	27.9%	5733448	-7.5%	5733448	3133224	120.5%
	Ցպահանջ պարտավորություններ		Դ	31995836	9.7%	35051841	9.6%	35051842	3111151	9.7%
			Ա	101414717	19.2%	100524983	-0.9%	100524984	22058686	28.1%
	Պարտավորություններ բանկերի նկատմամբ		Դ	15947988	26.1%	15108981	-5.3%	15108981	6058981	67.0%
			Ա	8993867	-20.2%	7827080	-13.0%	7827080	538353	7.4%
	Ֆիզիկական անձանց ավանդներ		Դ	4619851	0.9%	4847757	4.9%	4847757	710275	17.2%
			Ա	45685991	-1.5%	48473761	6.1%	48473761	2923272	6.4%
	Իրավաբանական անձանց ավանդներ		Դ	6019199	-35.1%	10251411	70.3%	10251411	391199	4.0%
			Ա	30571813	38.6%	35407063	15.8%	34120419	15667511	79.4%
	Այլ պարտավորություններ		Դ	28599730	1.8%	33984896	18.8%	35312641	10431831	44.3%
	Հաշվարկված վճարվելիք տոկոսներ		Ա	394923	-0.8%	428400	8.5%	428398	57107	15.4%
			Դ	880539	1.5%	969285	10.1%	969097	197921	25.7%
	Ընդհանուր պարտավորություններ		Ա	281585729	10.3%	298894992	6.1%	298935905	66858673	28.8%
Կապիտալ	Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ			38465846	1.4%	40134956	4.3%	40134956	3365951	9.2%
	Գլխավոր պահուստ			5121040	0.0%	5161084	0.8%	5161084	918701	21.7%
	Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր			0	-	0	-	0	0	-
	Չբաշխված շահույթ (վնաս)	Ընթացիկ ժամանակաշրջանի		7407191	71.5%	17259715	133.0%	17182041	10778865	166,3%
		Նախորդ ժամանակաշրջանի		4294957	-10.3%	-2857403	-166.5%	-2857405	-3472096	-564,9%
	Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ			59145709	6.1%	64735310	9.5%	64631639	14621998	29.2%
Ծանուցում	Ստացված գրավ			285136948	7.2%	304446478	6.8%	304446478	67939413	28.7%
	այդ թվում՝ պետ.արժեթղթեր			4556307	-18.6%	4768657	4.7%	4768657	-830011	-14.8%
	Ստացված երաշխավորություն			39225529	8.4%	50957543	29.9%	50957543	50957543	-
	Հաշվեկշռից դուրս գրված	վարկեր		9314824	-7.8%	9284120	-0.3%	9282606	-633248	-6,4%
		դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ		3315948	-7.6%	3388264	2.2%	3388264	-324553	-8,7%
		տոկոսներ		4386396	-11.6%	4258866	-2.9%	4258841	-1104441	-20,6%
	Տրամադրված երաշխավորություններ			6963235	30.1%	5835763	-16.2%	5835763	848722	17.0%
	Տրամա-դրված գրավներ	ընդամենը		1177371	-14.7%	9561007	712.1%	9561007	8725467	1044,3%
		այդ թվում՝ պետական արժեթղթեր		1108480	-15.3%	1535702	38.5%	1535702	700162	83,8%
	Ծանուցում. Ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերի քանակը			19		20		20		

Դ - դրամով (AMD) *Ա - արտարժույթով (FC)*

** 2004 թվականի տարեվերջի ցուցանիշներում ընդգրկված է եզրափակիչ հրջանառությունը:*

Հավելված 3

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների կառուցվածքի միտումները *

			31.12.02	31.12.03	Փոփոխությունը 31.12.03-31.12.02	31.03.04	Փոփոխությունը 31.03.04-31.12.03	30.06.04	Փոփոխությունը 30.06.04-31.03.04
			1	2	3	4	5	6	7
Ակտիվներ	Կանխիկ դրամական միջոցներ	Դ.	1.5%	1.7%	0.2%	1.5%	-0.2%	1.5%	0.0%
		Ա	4.3%	4.4%	0.1%	4.6%	0.2%	4.7%	0.0%
	Թղթակցային հաշվի և պարտադիր պահուստների մնացորդներ	Դ.	7.9%	7.3%	-0.5%	5.9%	-1.5%	6.0%	0.1%
		Ա	16.9%	22.1%	5.2%	18.8%	-3.3%	20.3%	1.4%
	Պետական արժեթղթեր		12.8%	11.1%	-1.7%	10.8%	-0.3%	11.7%	0.9%
	Պարտավորություններ ռեպո համաձ. ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոպով ձեռք բերված արտարժույթի գծով	Դ.	-1.8%	-0.9%	0.9%	-1.1%	-0.2%	0.0%	1.1%
		Ա	0.0%	0.0%	0.0%	-0.2%	-0.2%	-1.8%	-1.6%
	Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ.	0.0%	0.0%	0.0%	0.1%	0.1%	0.0%	-0.1%
		Ա	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%
	ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված ավանդներ	Դ.	0.0%	0.0%	0.0%	1.4%	1.4%	0.8%	-0.6%
		Ա	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.1%	0.1%
	Բանկերում տեղաբաշխված ավանդներ	Դ.	0.0%	0.2%	0.2%	0.3%	0.1%	0.5%	0.2%
		Ա	8.1%	8.1%	0.0%	8.1%	0.0%	6.4%	-1.7%
	Վարկեր տնտեսությանը	Դ.	7.8%	11.5%	3.7%	10.2%	-1.3%	11.8%	1.7%
		Ա	26.9%	23.5%	-3.4%	24.2%	0.7%	26.5%	2.4%
	Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ.	0.2%	0.5%	0.3%	0.4%	-0.1%	0.5%	0.1%
		Ա	1.7%	0.8%	-0.8%	0.7%	-0.2%	0.6%	-0.1%
	Պահուստաֆոնդ		-1.6%	-1.1%	0.6%	-1.1%	0.0%	-0.9%	0.2%
	Այլ ակտիվներ		5.5%	2.7%	-2.8%	2.3%	-0.4%	2.7%	0.4%
	Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	Դ.	0.2%	0.3%	0.1%	0.3%	0.0%	0.3%	0.0%
		Ա	0.8%	0.3%	-0.5%	0.3%	0.0%	0.3%	0.0%
	Հիմնական միջոցներ		6.3%	5.6%	-0.7%	5.3%	-0.3%	5.6%	0.3%
	Այլ արժեթղթեր		1.8%	0.2%	-1.6%	5.8%	5.7%	1.1%	-4.7%
	Լիզինգ, ֆակտորինգ		0.7%	1.5%	0.8%	1.4%	-0.1%	1.3%	0.0%
	Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		100.0%	100.0%	0.0%	100.0%	0.0%	100.0%	0.0%

				1	2	3	4	5	6	7
Պարտավորություններ	Բանկերի թղթակցային հաշիվներ		Դ	0.3%	0.2%	-0.2%	0.3%	0.1%	0.2%	-0.1%
			Ա	1.8%	1.1%	-0.6%	1.2%	0.1%	1.9%	0.7%
	Ցպահանջ պարտավորություններ		Դ	13.6%	13.8%	0.1%	10.7%	-3.1%	11.4%	0.7%
			Ա	27.7%	33.8%	6.2%	32.4%	-1.4%	33.3%	1.0%
	Պարտավորություններ բանկերի նկատմամբ		Դ	4.0%	3.9%	-0.1%	3.7%	-0.2%	5.0%	1.2%
			Ա	6.2%	3.1%	-3.0%	9.4%	6.3%	4.4%	-5.0%
	Ֆիզիկական անձանց ավանդներ		Դ	1.8%	1.8%	-0.1%	1.7%	0.0%	1.8%	0.1%
			Ա	19.3%	19.6%	0.3%	18.4%	-1.2%	18.2%	-0.2%
	Իրավաբանական անձանց ավանդներ		Դ	3.2%	4.2%	1.0%	3.8%	-0.4%	3.6%	-0.2%
			Ա	10.0%	8.5%	-1.5%	7.6%	-0.9%	8.6%	1.0%
	Այլ պարտավորություններ		Դ	11.4%	10.2%	-1.2%	10.2%	0.1%	11.0%	0.8%
	Հաշվարկված վճարվելիք տոկոսներ		Ա	0.2%	0.2%	0.0%	0.1%	0.0%	0.2%	0.0%
			Դ	0.5%	0.3%	-0.2%	0.3%	0.0%	0.3%	0.0%
	Ընդհանուր պարտավորություններ			100.0%	100.0%	0.0%	100.0%	0.0%	100.0%	0.0%
Սեփական կապիտալ	Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ			90.1%	73.4%	-16.8%	70.3%	-3.1%	68.0%	-2.2%
	Գլխավոր պահուստ			10.7%	8.5%	-2.2%	8.0%	-0.4%	9.2%	1.1%
	Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր			-0.9%	0.0%	0.9%	0.0%	0.0%	0.0%	0.0%
	Չբաշխված շահույթ (վնաս)	Ընթացիկ ժամանակաշրջանի		-4.9%	12.9%	17.8%	7.0%	-5.9%	7.8%	0,7%
		Նախորդ ժամանակաշրջանի		-1.7%	1.2%	3.0%	9.4%	8.2%	8.6%	-0,8%
	Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ			100.0%	100.0%	0.0%	100.0%	0.0%	100.0%	0.0%

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների կառուցվածքի միտումները

(շարունակություն)

			30.09.04	Փոփոխությունը 30.09.04-30.06.04	31.12.04	Փոփոխությունը 31.12.04-30.09.04	2004թ.տարե-կան**	Փոփոխությունը 31.12.04-31.12.03
			8	9	10	11	12	13
Ակտիվներ	Կանխիկ դրամական միջոցներ	Դ	1.7%	0.2%	1.9%	0.2%	1.9%	0.2%
		Ա	6.5%	1.8%	4.9%	-1.6%	4.9%	0.4%
	Թղթակցային հաշվի և պարտադիր պահուստների մնացորդներ	Դ	6.2%	0.2%	7.0%	0.8%	7.0%	-0.4%
		Ա	22.0%	1.7%	24.2%	2.1%	24.2%	2.0%
	Պետական արժեթղթեր		10.7%	-1.0%	10.1%	-0.6%	10.1%	-1.0%
	Պարտավորություններ ռեպո համաձ. ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոպով ձեռք բերված արտարժույթի գծով	Դ	-1.4%	-1.4%	-1.1%	0.4%	-1.1%	-0.2%
		Ա	-0.2%	1.7%	-0.1%	0.1%	-0.1%	-0.1%
	Ռեպո համաձայնագրեր (առանց միջբանկային ռեպոների)	Դ	0.1%	0.1%	0.0%	-0.1%	0.0%	0.0%
		Ա	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%
	ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված ավանդներ	Դ	0.0%	-0.8%	0.7%	0.7%	0.7%	0.7%
		Ա	0.0%	-0.1%	0.0%	0.0%	0.0%	0.0%
	Բանկերում տեղաբաշխված ավանդներ	Դ	0.8%	0.3%	0.7%	-0.1%	0.7%	0.4%
		Ա	5.8%	-0.7%	3.2%	-2.6%	3.2%	-4.9%
	Վարկեր տնտեսությանը	Դ	11.4%	-0.4%	11.1%	-0.3%	11.1%	-0.4%
		Ա	26.6%	0.1%	26.1%	-0.5%	26.1%	2.6%
	Վարկեր բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	Դ	0.6%	0.1%	0.4%	-0.2%	0.4%	-0.1%
		Ա	0.5%	-0.1%	0.6%	0.1%	0.6%	-0.2%
	Պահուստաֆոնդ		-1.1%	-0.2%	-1.0%	0.1%	-1.0%	0.0%
	Այլ ակտիվներ		2.5%	-0.1%	2.3%	-0.2%	2.3%	-0.4%
	Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	Դ	0.3%	0.0%	0.3%	0.0%	0.3%	0.0%
		Ա	0.3%	0.0%	0.3%	0.0%	0.3%	0.0%
	Հիմնական միջոցներ		5.4%	-0.3%	6.0%	0.7%	6.0%	0.4%
	Այլ արժեթղթեր		0.2%	-0.9%	1.1%	0.9%	1.1%	0.9%
	Լիզինգ, ֆակտորինգ		1.2%	-0.1%	1.3%	0.1%	1.3%	-0.2%
	Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		100.0%	0.0%	100.0%	0.0%	100.0%	0.0%

			8	9	10	11	12	13
Պարտավորություններ	Բանկերի թղթակցային հաշիվները	Դ	0.1%	-0.1%	0.1%	0.0%	0.1%	-0.1%
		Ա	2.2%	0.3%	1.9%	-0.3%	1.9%	0.8%
	Ցպահանջ պարտավորություններ	Դ	11.4%	-0.1%	11.7%	0.4%	11.7%	-2.0%
		Ա	36.0%	2.7%	33.6%	-2.4%	33.6%	-0.2%
	Պարտավորություններ բանկերի նկատմամբ	Դ	5.7%	0.7%	5.1%	-0.6%	5.1%	1.2%
		Ա	3.2%	-1.2%	2.6%	-0.6%	2.6%	-0.5%
	Ֆիզիկական անձանց ավանդներ	Դ	1.6%	-0.2%	1.6%	0.0%	1.6%	-0.2%
		Ա	16.2%	-2.0%	16.2%	0.0%	16.2%	-3.4%
	Իրավաբանական անձանց ավանդներ	Դ	2.1%	-1.5%	3.4%	1.3%	3.4%	-0.8%
		Ա	10.9%	2.2%	11.8%	1.0%	11.4%	3.3%
	Այլ պարտավորություններ		10.2%	-0.9%	11.4%	1.2%	11.8%	1.2%
	Հաշվարկված վճարվելիք տոկոսներ	Դ	0.1%	0.0%	0.1%	0.0%	0.1%	0.0%
		Ա	0.3%	0.0%	0.3%	0.0%	0.3%	0.0%
	Ընդհանուր պարտավորություններ		100.0%	0.0%	100.0%	0.0%	100.0%	0.0%
Կապիտալ	Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ		65.0%	-3.0%	62.0%	-3.0%	62.1%	-11.4%
	Գլխավոր պահուստ		8.7%	-0.5%	8.0%	-0.7%	8.0%	-0.5%
	Բանկի կողմից ետգնված սեփական բաժնետոմսեր		0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%	0.0%
	Չբաշխված շահույթ (վնաս) Ընթացիկ ժամ-շրջանի		12.5%	4.8%	26.7%	14.1%	26.6%	13,7%
	Չբաշխված շահույթ (վնաս) Նախորդ ժամ-շրջանի		7.3%	-1.3%	-4.4%	-11.7%	-4.4%	-5,6%
	Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ		100.0%	0.0%	100.0%	0.0%	100.0%	0.0%

Դ - դրամով (AMD) *Ա - արտարժույթով (FC)*

** 2004 թ. տարեկան տվյալները աղյուսակում ներկայացված են վերահսկողական ընդհանուր դաշտում գործող բանկերի կտրվածքով. I-ից III եռամսյակում՝ 19 բանկերի, IV եռամսյակում, ինչպես նաև տարեվերջի դրությամբ՝ 20 բանկերի համար:*

*** 2004 թվականի տարեվերջի ցուցանիշներում ընդգրկված է եզրափակիչ շրջանառությունը:*

Հավելված 4

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի նորմատիվային կապիտալի հաշիվների փոփոխությունը

01.01.2004-31.12.2004 *հազար ՀՀ դրամ*

	Մեծությունը ժամ-շրջանի սկզբում	Փոփոխությունը ժամ-շրջանի ընթացքում	Մեծությունը ժամ-շրջանի վերջում
Ընդհանուր կապիտալ,	45367401	14444926	59812327
Հիմնական կապիտալ	43396303	10972682	54368985
Կանոնադրական կապիտալ	36769004	3365952	40134956
Ծանուցում. Իրացված բաժնետոմսերի քանակ (հատ)	2379208	184201	2563409
Գլխավոր պահուստ	4243145	917939	5161084
Չբաշխված շահույթ	7047813	7276825	14324638
Հիմնական կապիտալից նվազեցվող գումարներ	4643229	586064	5229293
Երկարաժամկետ ստորադաս փոխատվություն	-	-	-
Բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսեր	-	-	-
Ոչ նյութական ակտիվներ, բացի «Կանոնակարգ 2»-ով նախատեսվածից	497821	-298504	199317
Այլ բանկերի կանոնադրական կապիտալներում ներդրումներ	817558	733601	1551159
Չօգտագործվող նյութական ակտիվներ	2418523	-79783	2338740
Նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի և հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությանը գերազանցող գումար	412506	-412506	-
Բանկի սեփական և վարձակալած հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումներ	496821	637897	1134718
Այլ նվազեցումներ	-	5359	5359
Լրացուցիչ կապիտալ	1971098	6419918	8391016
Վերագնահատման պահուստներ	1979027	3020596	4999623
Հաշվեկշռի միավորման ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ	-	-	-
Այլ պահուստներ	-7929	-1558	-9487
Երկարաժամկետ ստորադաս փոխառություն	-	3400880	3400880

Հավելված 5

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների մասնակցությունը

հազար ՀՀ դրամ

	31.12.02	Փոփոխությունը ժամ-շրջանի ընթացքում	31.12.03	Փոփոխությունը ժամ-շրջանի ընթացքում	31.12.04
Կանոնադրական կապիտալը	34309252	2197169	36506421	3365952	39872373
այդ թվում՝ ոչ ռեզիդենտներ	16934088	131143	17065230	3923222	20988452
ոչ ռեզիդենտների տես. կշիռը, %	49.4%	-2.6%	46.7%	5.9%	52.6%

Հավելված 6

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի եկամուտները և ծախսերը

հազար ՀՀ դրամ

	31.12.02	31.12.03	Փոփոխություն 31.12.03-31.12.02	31.03.04	30.06.04	30.09.04	31.12.04	31.12.04*	Փոփոխություն 31.12.04-31.12.03
	1	2	3	4	5	6	7	8	9
Ծղրակցային հաշիվներից	284059	261917	-7.8%	40466	86280	148877	228767	228767	-12.7%
Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներից	423775	472784	11.6%	139224	289351	407313	541284	541284	14.5%
Առևտրային բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	630951	601887	-4.6%	162874	318091	457294	604191	604191	0.4%
Տնտեսությանը տրված վարկերից	14502850	15956529	10.0%	4441036	9374819	14724855	20529181	20529181	28.7%
Օվերդրաֆտից ստացված տոկոսներ	645131	491091	-23.9%	84265	153831	242207	317153	317153	-35.4%
Վարկային քարտերից ստացված տոկոսներ	11980	40717	239.9%	26813	51334	94115	140519	140519	245.1%
Պետական գանձապետական արժեթղթերից ստացված տոկոսներ	3086299	3583888	16.1%	847725	1632039	2335348	2961637	2961637	-17.4%
Հետգնման պայմանագրերից ստացված տոկոսներ	319294	318642	-0.2%	37958	79153	122867	159818	159818	-49.8%
Լիզինգից ստացված տոկոսներ	5088	3645	-28.4%	0	0	0	0	0	-100.0%
Այլ տոկոսային եկամուտներ	935078	694914	-25.7%	138860	280305	401978	516692	516692	-25.6%
Ընդամենը տոկոսային եկամուտներ	**20844505**	**22426014**	**7.6%**	**6131716**	**12720572**	**19654606**	**27022186**	**27022186**	**20.5%**
Ծղրակցային հաշիվների դիմաց վճարված տոկոսներ	76407	15173	-80.1%	4425	10088	29061	49614	49614	227.0%
Բանկային հաշիվների ու ցպահանջ ավանդների դիմաց վճարված տոկոսներ	458284	381196	-16.8%	102725	205648	318904	485684	485684	27.4%
Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկից ներգրաված միջոցների դիմաց վճարված տոկոսներ,	485836	636953	31.1%	173524	357756	605022	847003	847003	33.0%
Հետգնման պայմանագրերի գծով պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ	138478	32736	-76.4%	5301	19472	34230	42793	42793	30.7%
Առևտրային բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցների դիմաց վճարված տոկոսներ	529891	343942	-35.1%	83003	160758	271677	390362	390362	13.5%
Ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներ	5398720	4512406	-16.4%	1178644	2334428	3522813	4788978	4788978	6.1%
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցների դիմաց վճարված տոկոսներ	467239	303463	-35.1%	86569	177454	262421	286272	286272	-5.7%
Օվերդրաֆտի դիմաց վճարված տոկոսներ	93	1335	1335.5%	175	204	1059	1059	1059	-20.7%
Տոկոսային ծախսեր ավանդների ապահովագրության դիմաց	0	225297	#DIV/0!	125529	250645	384773	523675	523675	132.4%
Հաշվեգրված, բայց չհավաքագրված չաշխատող ակտիվների տոկոսների գծով	1310935	557661	-57.5%	121042	255527	393087	474246	474246	-15.0%
Այլ տոկոսային ծախսեր	292659	363138	24.1%	5099	19595	24277	27058	27058	-92.5%
Ընդամենը տոկոսային ծախսեր	**7373300**	**7373300**	**0.0%**	**1973910**	**3952629**	**6068985**	**8275743**	**8275743**	**12.2%**
Զուտ տոկոսային եկամուտներ	***11675672***	***15052714***	***28.9%***	***4157806***	***8767943***	***13585621***	***18746443***	***18746443***	***24.5%***
	1	2	3	4	5	6	7	8	9

Ստացված միջնորդավճարներ	7501599	8520639	13.6%	1553871	3395506	5400865	7619674	7619674	-10.6%
Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով գործառնություններից, հավատարմագրային կառավարման գործառնություններից ստացված եկամուտներ	296676	347919	17.3%	51845	118769	192459	277609	277609	-20.2%
Հեջավորման ածանցյալ գործիքներից զուտ եկամուտներ	218	3530	1519.3%	-14	-1176	0	-247	-247	-107.0%
Ֆակտորինգից ստացված զուտ եկամուտներ	33498	68333	104.0%	49380	114037	190894	275912	275912	303.8%
Այլ կազմակերպություններում ներդրումներից ստացված եկամուտներ	15355	54425	254.4%	69707	153675	491768	638498	638498	1073.2%
Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ	112744	236431	109.7%	92902	260556	375417	427445	427445	80.8%
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտներ	2236048	2501603	11.9%	747823	1478752	2519891	3693332	3693332	47.6%
Արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերություն	-120092	-513863	327.9%	-165149	-425582	-695716	-428237	-428237	-16.7%
Հիմնական միջոցների օտարումից ստացված զուտ եկամուտներ	-469793	8884	-101.9%	39206	65329	65391	91844	91844	933.8%
Հիմնական միջոցների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ	-195513	5509	-102.8%	0	0	-556	7819	7819	41.9%
Ստացված տույժեր, տուգանքներ	744815	590799	-20.7%	99491	187573	299380	410001	410001	-30.6%
Այլ ոչ տոկոսային եկամուտներ	1517615	1266558	-16.5%	242070	559006	934383	1449305	1449305	14.4%
Ընդամենը ոչ տոկոսային եկամուտներ	**11673170**	**13090767**	**12.1%**	**2905105**	**6032339**	**10777067**	**15284629**	**15284629**	**16.8%**
Հաշվարկված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ (տրված այլ փոխհատուցումներ և սոցիալական պահանջների ֆինանսավորում)	5389896	5886662	9.2%	1570543	3281824	5143560	7710963	7710963	31.0%
Գործուղման ծախսեր	251408	337150	34.1%	78416	180342	267790	348477	348477	3.4%
Հատկացումներ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին	712904	684018	-4.1%	166345	346416	545296	788023	788023	15.2%
Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ	746620	805375	7.9%	187603	381456	560975	761323	761323	-5.5%
Ամորտիզացիոն մասհանումներ	1846546	1826832	-1.1%	521893	1086422	1691795	2375702	2375702	30.0%
Բանկի շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճար	473514	528567	11.6%	171018	340755	494805	658111	658111	24.5%
Գովազդային, ներկայացուցչական ծախսեր	616728	842913	36.7%	161476	393482	591926	862835	862835	2.4%
Գրասենյակային և տպագրական ծախսեր	330824	352905	6.7%	87606	167320	256001	355707	355707	0.8%
Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	255042	204322	-19.9%	46251	94550	177917	247554	247554	21.2%
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	203597	196811	-3.3%	47477	101895	153929	215921	215921	9.7%
Տրանսպորտային ծախսեր	266920	250893	-6.0%	57652	125249	190554	270838	270838	7.9%
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	704037	787587	11.9%	203625	430415	686582	952560	952560	20.9%
Վճարված տույժեր, տուգանքներ	130259	54194	-58.4%	3276	11870	18705	28857	28857	-46.8%
Ուսուցման ծախսեր	44190	53314	20.6%	12122	22175	34927	41524	41524	-22.1%
Այլ ոչ տոկոսային ծախսեր	3505137	3789868	8.1%	302327	855753	1200823	1757843	1757843	-53.6%
Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր	**15477622**	**16601410**	**7.3%**	**4130694**	**8817789**	**13859894**	**19971210**	**19971210**	**20.3%**
Զուտ ոչ տոկոսային եկամուտներ	**-3804452**	**-3510643**	**-7.7%**	**-1225589**	**-2785450**	**-3082827**	**-4686581**	**-4686581**	**33.5%**
	1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**

Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստին	4216497	5165311	22.5%	1847988	3588206	5568971	8112327	8112327	57.1%
Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստին	17852856	11202553	-37.3%	2011515	3870337	6195873	16201558	16201558	44.6%
Արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստին	47701	21541	-54.8%	51	5013	5013	5064	5064	-76.5%
Ընդամենը հատկացումներ	**22117054**	**16389405**	**-25.9%**	**3859554**	**7463556**	**11769857**	**24318949**	**24318949**	**48.4%**
Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստից	4025248	4635761	15.2%	1679496	3461000	5229368	7387766	7387766	59.4%
Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստից	10538879	8489341	-19.4%	1767799	3368562	5076247	22716600	22716600	167.6%
Արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստից	13650	28350	107.7%	10	7695	10668	28905	28905	2.0%
Ընդամենը վերադարձ	**14577777**	**13153452**	**-9.8%**	**3447304**	**6837257**	**10316283**	**30133271**	**30133271**	**129.1%**
Զուտ մասհանումներ	**7539277**	**3235953**	**-57.1%**	**412250**	**626299**	**1453574**	**-5814322**	**-5814322**	**-279.7%**
Շահույթ մինչև հարկվելը	**331943**	**8306118**	**2402.3%**	**2519967**	**5356194**	**9049220**	**19874184**	**19874184**	**139.3%**
Շահութահարկ	911578	1790459	96.4%	483943	1036014	1642029	2718137	2718137	51.8%
Զուտ շահույթ	**-579635**	**6515659**	**-1224.1%**	**2036024**	**4320180**	**7407191**	**17156047**	**17156047**	**163.3%**
Հաշվարկված շահաբաժիններ	6899	2343	-66.0%	0	0	0	0	0	-100.0%
Չբաշխված շահույթ	**-586534**	**6513316**	**-1210.5%**	**2036024**	**4320180**	**7407191**	**17156047**	**17156047**	**163.4%**

** 2004 թվականի տարեվերջի ցուցանիշներում ընդգրկված է եզրափակիչ հրջանառությունը:*

Հավելված 7

ՀՀ բանկային համակարգի եկամտաբերությունն ըստ ակտիվների և եկամտաբերությունն ըստ կապիտալի *

հազար ՀՀ դրամ

	2002	2003	2004
Եկամտաբերություն ըստ ակտիվների			
Բանկային համակարգ	2.4%	2.7%	3.3%
Միջին ըստ բանկերի (չահութաբեր բանկերի)	3.9%	3.3%	3.4%
Նվազագույն (չահութաբեր բանկերի)	24.6%	0.04%	0.1%
Առավելագույն (չահութաբեր բանկերի)	0.1%	11.5%	10.9%
Եկամտաբերություն ըստ կապիտալի			
Բանկային համակարգ	13.3%	14.4%	18.5%
Միջին ըստ բանկերի (չահութաբեր բանկերի)	16.7%	16.8%	19.8%
Նվազագույն (չահութաբեր բանկերի)	41.0%	0.2%	0.2%
Առավելագույն (չահութաբեր բանկերի)	0.1%	46.0%	43.2%

** Բանկային համակարգի ցուցանիշներում ներառված չեն «Հայկապ» բանկի տվյալները:*

Հավելված 8

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի վարկային ներդրումները

հազար դրամ

	2002					
	Մինչև 1 տարի		1 տարուց ավել		Ընդամենը	
	Դ.	Ա	Դ.	Ա	Դ.	Ա
1. Ընդամենը վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր (2+3)	13746996	60739387	6042545	29985611	19789541	90724998
1.1 Ժամկետային ակտիվներ՝	12746377	53400078	6024166	28603006	18770543	82003085
այդ թվում՝ վարկեր	12735372	36492401	5768901	25980688	18504273	62473090
միջբանկային վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր		16905045		2462387		19367432
1.2 Երկարաձգված ակտիվներ	650379	3751324	18379	1382605	668758	5133929
այդ թվում՝ վարկեր	650379	3751324	18379	33974	668758	3785298
միջբանկային վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր						
1.3 Ժամկետանց ակտիվներ	350240	3587984			350240	3587984
այդ թվում՝ վարկեր	350240	3584682			350240	3584682
միջբանկային վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր						
2. Ոչ ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր	1502	21313740	1124	5370878	2626	26684618
2.1 Ժամկետային ակտիվներ	1501	21308807	1124	5370878	2625	26679685
2.2 Երկարաձգված ակտիվներ		1462				1462
2.3 Ժամկետանց ակտիվներ	1	3471			1	3471
3. Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր ըստ ճյուղերի, այդ թվում՝	13113719	34534794	6673196	29505586	19786915	64040381
3.1 Արդյունաբերություն	5982813	10149247	2282967	13775764	8265780	23925011
հանքագործական	36889	331172	49612	430011	86501	761183
էներգետիկա	3595624	3496300	27000	5111003	3622624	8607303
սննդամթերք	1473208	3213493	964246	4471548	2437454	7685041
թեթև	281856	152306	355148	984486	637004	1136792
քիմիական	30590	133391	210028	1667400	240618	1800791
շինանյութերի	86782	116065	110983	255308	197765	371373
թանկարժեք իրեր	95130	564979	281	44646	95411	609625
մետալուրգիա	2448	902653	2410	292445	4858	1195098
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	30585	346433	135276	242701	165861	589134
արդյունաբերության այլ ճյուղեր	349701	892455	427983	276216	777684	1168671
3.2 Գյուղատնտեսություն	906499	3167330	400198	3312781	1306697	6480111
3.3 Շինարարություն	238274	1010254	719945	1306349	958219	2316603
3.4 Տրանսպորտ և կապ	155106	282327	156836	293838	311942	576165
3.5 Առևտուր	3985375	5198929	1336253	5061529	5321628	10260459
3.6 Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ						
3.7 Ֆինանսական հատված	60470	2820521		466115	60470	3286636
3.8 Սպառողական վարկեր	985594	10539655	939241	2761163	1924835	13300818
3.9 Տնտեսության այլ ճյուղեր	799588	900416	837756	2994162	1637344	3894578

Հավելված 8

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի վարկային ներդրումները
(շարունակություն)

հազար դրամ

Ցուցանիշներ	2003					
	Մինչև 1 տարի		1 տարուց ավել		Ընդամենը	
	Դ	Ա	Դ	Ա	Դ	Ա
1. Ընդամենը վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր (2+3)	21565930	58618230	13900314	34955705	35466244	93573936
1.1 Ժամկետային ակտիվներ՝	20334348	57440512	13900314	31157223	34234662	88597736
այդ թվում՝ վարկեր	16470760	34863434	13791334	29166947	30262094	64030382
միջբանկային վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր	350000	21425756		1301809	350000	22727565
1.2 Երկարաձգված ակտիվներ	666496	314609		3798482	666496	4113091
այդ թվում՝ վարկեր	385695	310777		2830000	385695	3140777
միջբանկային վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր						
1.3 Ժամկետանց ակտիվներ	565086	863109			565086	863109
այդ թվում՝ վարկեր	547838	779922			547838	779922
միջբանկային վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր						
2. Ոչ ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր	622159	22034104	1965953	2598077	2588112	24632181
2.1 Ժամկետային ակտիվներ	232056	21909680	1965953	2598077	2198009	24507757
2.2 Երկարաձգված ակտիվներ		92163				92163
2.3 Ժամկետանց ակտիվներ	390103	32261			390103	32261
3. Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր ըստ ճյուղերի, այդ թվում՝	20790705	36245341	12087427	32696414	32878132	68941755
3.1 Արդյունաբերություն	4912626	8312771	4913815	11632262	9826441	19945033
հանքագործական	22824	1118700	9335	110313	32159	1229013
էներգետիկա	1853450	2471778	2380900	4040399	4234350	6512177
սննդամթերք	1646205	3258236	1316859	4216775	2963064	7475011
թեթև	261664	545275	89602	432391	351266	977666
քիմիական	34726	52526	9856	150970	44582	203496
շինանյութերի	225391	211517	332488	681283	557879	892800
թանկարժեք իրեր	40834	137902	184930	24322	225764	162224
մետալուրգիա	22308	399	23756	484213	46064	484612
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	206296	135236	61460	116979	267756	252215
արդյունաբերության այլ ճյուղեր	598928	381202	504629	1374617	1103557	1755819
3.2 Գյուղատնտեսություն	732858	3997374	203436	2775316	936294	6772690
3.3 Շինարարություն	1574440	667881	540951	2022178	2115391	2690059
3.4 Տրանսպորտ և կապ	232146	88061	49816	297043	281962	385104
3.5 Առևտուր	7142331	4247093	3382295	6363706	10524626	10610799
3.6 Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	669261	249027	396076	1387066	1065337	1636093
3.7 Ֆինանսական հատված	2500735	5732963	547	53376	2501282	5786339
3.8 Սպառողական վարկեր	2635256	12130873	1441538	7006390	4076794	19137263
3.9 Տնտեսության այլ ճյուղեր	391052	819298	1158953	1159077	1550005	1978375

Հավելված 8

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի վարկային ներդրումները

(շարունակություն)

հազար դրամ

Ցուցանիշներ	2004					
	Մինչև 1 տարի		1 տարուց ավել		Ընդամենը	
	Դ	Ա	Դ	Ա	Դ	Ա
